


Smuglyuk





ՏՈՒՂԱՐԵԱՆՑ

16 NOV 2011

ՉԱՍՈՑԻ

ԲԱԴԳԻ ԱՆԻՒԼ

Առէք դաւք ու միշտ կարդացէք,  
Գիւղի կեանքը սիրեցէք,  
Գիւղն է տալիս ձեզ և՛ կեանք  
Եւ ապրելու, և՛ չնշելու փրկանք:

ՀԵՂԻԿՈՎԱ



Թ Ք Ֆ Լ Ի Ս

ԷԼԵՐԱՄԱՆՆԱՐԱՆ ՏՊ. Ա. ԱՐԱՆԵԱՆՑԻ. ՊՈԼԻՑ

1909

391.99  
5-97

391.99

6-97

ՄՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ք. ՃՈՒՂՈՒՐԵԱՆՑ

EROS MUL 02

# ՉԱՏՈՅՑԻ

ԲԱՂԴԻ ԱՆԻՒԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ԹԻՎԼԻՒ  
ԷԼԵՔՏՐԱԿԱՐԱ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆՑԻ. ՊՈԼԻՑ. 7  
1908

20 JUN 2013

41192

### Յառաջաբանի տեղ

«Մոռացուած Եշխարհ» և միւս հրատարակութիւններս, իբրև իմ առաջին կամ սկսնական աշխատանքներ, ողջունիւ ընդունուեցին մեր յայտնի մամուլի կողմից: Յարգելի քննադատներս յայտնեցին միատեսակ կարծիքներ—գտնելով իմ մէջ «բնածին ձիրք» իմ ընտրած ժողովրդական գրականութեան ճիւղում՝ ցանկութիւն յայտնելով, որ այդ ձիրքը ևս ազնուացնեմ գեղարուեստապէս ևս: Իմ ուղեցոյց քննադատների բարի ցանկութիւններին հասնելու համար ինձ շատ բան էր պակասում. այս պակասը լրացնելու համար բուռն փափագ և ցանկութիւն ունէի, ունիմ և այժմ իսկ, 45 տարեկան հասակումս էլ, գնալու եւրոպայում գրականութիւն ուսանելու, ճանապարհորդելու ծով ու ցամաքի վրայ՝ նորանոր տեսարաններ ու տպաւորութիւններ ստանալու և աշխարհայեացքներս վերածնութեան ենթարկելու. սա իմ առաջին փափագն է, բայց ցաւել և յուղուել եմ միշտ, որ նիւթական միջոցներից զուրկ լինելս ինձ մինչեւ օրս զրկել է դրանից:

Երկրորդ փափագս է, գոնէ, մեր մայր հայրենիքի սրբազն վայրերն իջնելու և մեր բազմաբարբառ գիւղական ժողովրդի ամեն խաւերին, նրա նիստ ու կացին, նրա ուրախութեանն ու գարդերին ծանօթանալու, ուսումնասիրելու, զրի առնելու, կորսալից ազատելու գրական գանձերը և հայ գրադարանի սեփականութիւնը գարձնելու, բայց իմ այս իդեարն ու ցանկութիւնները, զգացումներն ու յղացումները զարձեալ և միանգամայն խորտակւում հն քեասիրութեանս անդունդի խորքերում, որովհետև միջոց տուող չ'ունիմ:

Վերջին փափագիս հասնելը հեշտ կլինէր ինձ համար, եթէ ընտանեկան հոգսերից ազատ լինէի:

Քահանայութիւնս ինձ չի ապահովում, որովհետև ապահովուելու համար ժամանակիս քահանայի երեսը պէտք է բաւական պինդ լինի, որից ես նոյնպէս զուրկ եմ:

Աշխատանքներս ըննադատուել են «Նոր-Դար»-ում,  
«Մշակուում», «Արձագանք»-ում, «Մուրճ»-ում, գնա-  
հատել, խօսել են նաև տաճկահայ «Ծաղիկ» և «Բիւ-  
զանդիոն» թերթերը. բոլորն էլ նպաստաւոր, որ և  
գոհացրել են ինձ: Մակայն, ամենաանաչառ քննադատ  
ես համարել եմ նախ՝ հենց իրեն, հայ գիւղական ըն-  
թերցող և ունկնդիր ժողովրդին, այսինքն այն ընդու-  
նելութիւնը և հետաքրքրութիւնը, որ իմ գրքերը դար-  
թեցրել են իսկական ժողովրդի մէջ և երկրորդ՝ գիւ-  
ղի կեանքին այն քաջածանօթ անձինքներին, որոնք  
միենոյն ժամանակ և հեղինակաւոր են, և գրող, և հեղի-  
նակ ու գիւղացի: Այսպիսիներից անմահ Մելքիսեդեկ  
վեհափառ Արք-եպիսկոպոս Մուրատեանի սրբատառ և  
արտասուալից նամակը խորին ակնածութեամբ տպա-  
գրում եմ գործիս սկզբում—իրեւ խորաթափանց ար-  
տայայտիչ գիւղական կեանքին հմուտ ընթերցողի ստա-  
ցած և զգացած տպատորութիւնների:

Արժանապատիւ Տ. Յարումիւն քահանայ Ճուղուրեան,  
Արժանապատիւ սիրելի,

Տկար էի և անկողնոյ մէջ պառկած, երբ ստացայ  
Չեր պատուական երկասիրութիւնն—«Մուացուած աշ-  
խարհ»: Մեծ հաճութեամբ կարդացի և գողցիս այն հայ-  
րենիքն փոխադրուեցայ, ուր ծնած էի և զարդացած:  
Այն բարբառն, այն սովորութիւններն, այն առածներն,  
այն խօսից դարձուածներն, նորոգեցան, կենդանացան,  
և ոչ միայն արտմականներն, այլ և նոյն իսկ ուրախա-  
կաններն տամկացուցին աչքերս արտասուքով: Հայրե-  
նեաց սէրն մարդ տակաւին կարողացած չէ լիովին  
բացատրել. իսկ ես արտասուքս միայն կը համարիմ  
բացատրութիւն:

Կ'օրհնեմ զՉեղ հայրական սիրով, աղօթեցէր, աշ-  
խատեցէր և գրեցէր, ինչ որ հայրենական է:

Ողջունիւ հայրական սիրոյ՝

Առաջնորդ հայոց՝ Մելքիսեդեկ Արք-եպիսկոպոս  
ՄՈՒՐԱՑԵԱՆ

Զմիւռնիա 17 Յունվ. 1901.

## ԶԱՏՈՅԻ ԲԱՂԻԻ ԱՆԻԻԲ:

Ա.

1894-թուի խիտ ձմրան մի մութն ու մա-  
ռախուղն իրար խառնուած գիշեր անընդհատ  
ձիւն էր գալիս մինչև առաւօտ: Անգութ և  
անզգայ սառնամանիքը, որ ոչ մի բռնութիւնից  
երես թեքել չը գիտէ, ամենքին էլ ահաւորել  
էր, ոտքներն ու ձեւքները սարսափ ձգած, մա-  
նաւանդ խեղճ, աղքատ, մերկ ու ջլբաց գեղջուկ-  
ներին քշել, տուն էր արել, և, անյագ ու կա-  
տաղի գաղանի նման, այնտեղ՝ այն ծակուծուկ,  
խղճուկ օգաների քիւնջ ու պուճախումն էլ չէր  
ուզում հանգիստ թողնել նրանց. այլ իւր վիշա-  
պաշունչ բուք ու բորանի ոռնոցով ներս էր  
թափում իւր բերանի կատաղի թոյնը, սառե-  
ցնում, փետացնում էր բաց միսները, ու նրանց  
տանջուած ոսկորներիցն անզամ անցնելու սպառ-  
նալիքով կարծես սև օձի նման կծում, շան-  
թում, մորմոտում, կծկում ու կուչ ածում անվերջ:

Ճրագից սովորաբար միշտ զուրկ մեր գեղ-  
ջուկ եղբայրների ու մանաւանդ որբ և այրի  
քոյրերի խրճիթները կիսով չափ լուսաւորողն

օջաղում վառուսդ. կամ աւելի ուղիղն ասած՝  
առկայժուող կրակն էր։ Նրանք իրենց որբա-  
նման երեխաներին վաղուց արդէն տեղաշորի տա-  
կըն էին ժողովել, ոտնածոց անել տուել, և, վեր-  
մակի փոխարէն սակայն, ունեցած չուլ ու փալաս-  
ները վրաները թափել, այսինքն՝ մի կերպ տաքաց-  
րել, քնացրել էին, իսկ իրենք կրակի, որպէս Աստու-  
ծու, գիրկն էին ժողովուել ու կարծես երկրպա-  
գում էին նրան։ Բայց ինչ օգուտ, երբ խեղ-  
ճերն առաջները կրակին դէմ արած տաքացնե-  
լիս քամակներն էր ցրտատար լինում, իսկ քա-  
մակները կրակին դարձնելիս, առաջներն էր  
ցրտատար լինում։ մնացել էին շուռ ու մուռ  
գալիս ու չերմութեան աստուծուն երկրպագե-  
լիս։

Այդ դաժանելի կացութեան մէջ էին ան-  
խախիր բոլոր չքաւոր ու անճար և անօգնական-  
ները և շատ չնշին էր նրանց կացութեան պայ-  
մանների տարբերութիւնը։

Նրանցից միքանիսը հազիւ թէ ուտելու չոր  
ու ցամաք հաց ունէին մինչև գարունը. միւսներն  
ունէին մի ամսուայ միայն. բայց կային այնպի-  
սիներն անգամ, որոնք վաղուց արդէն ողորմու-  
թեամբ էին պահպանում իրենց գոյութիւնը։  
սակայն անողորմ ձմեռը, կարծես իւր կատաղու-  
թիւնից կուրացած, չէր տեսնում այդ ամենը, և,  
չար աստուծու վրէժինդրութիւնից մոլեգնած։

ունալով ամենուրեք տարածում էր իւր սարսա-  
փելի շունչն ու հիւծում, յուսահատեցնում,  
մահուան գուռը հասցնում նրանց։

Խրճիթների ծխնելոյզներից ներս թափուող  
ձիւնը հետզհետէ սպանում էր եղած աղքատիկ  
կրակներն էլ հանգցնել. ոչ ոք չէր հաւատում  
յաջորդ օրուայ պարզուելուն ու բացուելուն, լաւ  
եղանակին, այնքան անողորմ կերպով շատանում  
էր վրատուող ձիւնը. ուստի մինը դուրս գնա-  
լով խրճիթից, ձիւնի խորութիւնը չափելով, միւսը  
վերկենայելով, առուահ էին լինում գալիք թշու-  
առութիւնից։

—Ո՞ւհ, անտէր ըլի էսպէս ձմեռը. չուել  
լուսը թամամ մի գաղ խորանալու ա ձինը։

—Վաշշ վայ մեր ոչխարների օրին...։

—Տէրը մի արասցէ, եթէ մի շաբթուայ  
չափ էլ էսպէս շարունակւի, ապրուստներս կա-  
տարեալ դժոխք ա գառնալու։

— Հա, եթէ երկարեց, լծկաններս ձեռնե-  
րիցս ըլելու են, տուններս քանդուելու ա, էլ մի  
ասիլ...։

— Ո՞, Աստւած, եարաք գիտե՞ս, որ հաց  
չունենք, գիտե՞ս որ էգուցւայ համար էլ ուղե-  
լու, մուրալու յուսատեղ չի մնացել մեզանում։

— Ա՛խ, քո տունդ չըանդուի Աստւած, եա-  
նի ինչ ենք արել քեզ, ինչ մեղք ենք գործել,  
որ ոընէ չիլ ու չիփլախ, ոընէ անօթի ու ծա-  
ռական անօթի ու ծառական։

ըսւ ես թողել մեզ, հաբա ասում են թէ դու  
ողորմած, ամեն բան տեսնում, լսում ես. հաբա  
ասում են թէ դու քու ստեղծածին մոռանում  
չես. թէ դօրթ էտպէս ա, էլ ո՞ր օրուայ համար  
ա տմենատեսութինդ. չես տեսնում, որ հացի  
փոխարէն միսս են ուտում եթիմները<sup>՞ս</sup>: Ականջ-  
ներդ ինչի՞ ես փակել, խուզ հօ չես. ինչու չես  
լսում էսքան աղի արտասունքս, լաց ու պաղա-  
տանքն. սիրադ ինչու ես քարացրել աղքատների  
ու որբերի համար. եթէ դու ես ստեղծել, ին-  
չու ես ստեղծել. ինչու ես ստեղծել ու տահ-  
ջում, չարչարում մեզ, ա չարչարուես գու էլ...

Այս յուսահատութիւնն ու երկիւղը, այս վըշ-  
տալի հառաջանաց ձայները յառաջ էին եկել  
նախընթաց տարուայ ամբերիութիւնից. անաջո-  
ղութիւններից: Նրանք չէին կարողացել այնքան  
պաշար ժողովել, որ մինչև գարունը կամ մինչև  
նորի դուրս գալը բաւականացնէր թէ իրենց, հ-  
թէ լնաւանի կենդանիներին. այսինքն՝ մի կող-  
մից նրանց կանաչ արտերն ու արօտները կար-  
կուան էր տարել, մի կողմից մորեխն էր կերել  
ու կտրել և միւս կողմից էլ երաշտը խաշել ու  
տոչորել: Ահա այս էր նրանցից շատերին դառն  
հոգս պատճառող դարդն ու վարամը. և այս ա-  
նաջող հանգամանքից ինչ ասել կուզէ, որ ամե-  
նից առաջ և ամենից շատ յուսահատում,  
ար-  
տասւում էին այն անձար աղքատները՝ որոնք

առանց այն էլ մինչեւ վզները պարաքերի մէջ  
թողուած ու խրուած էին, իսկ այրիների ու որ-  
բերի յոյար հօ, միանգամայն խորտակւում էր  
արդէն:

Աղքատներից ու չքաւորներից մինը՝ եօթ  
տարեկան հասակից որբութեան և կեանքի կամ  
տանջանքի դառն բաժակն աղաների ու խանում-  
ների դուներին ճաշակած Զատօն, այնքան խոտ  
ու դարման ունէր իւր չոթալում, որ ամբողջ  
ձմեռն անպայման բաւական էր իւր մի հատ  
եղանը—եղբօրը կամ ընկերին. սակայն, պատ-  
րաստի էն խոտն ու դարմանն էլ որ չունենար  
նա, էլի կարող էր պահպանել իւր եղբայր Խըն-  
ձորին, որի համար նա միշտ ասում էր. «Ես  
եղեայր չունեմ, իմ եղբայրն իմ եղն ա. խոտ  
ու դարման էլ որ չունենամ, ձեռներիս փչելով  
կը գնամ լանջերն ու ցաքուտնին կ'ընկնեմ, գե-  
տինը մատներովս էլ կը փորեմ ու օրական մի-  
շալակ տակոփք կը հանեմ, կը բերեմ կը կշաց-  
նեմ նրան»:

Այն, այդպէս կանէր Զատօն, միայն թէ այդ  
լինէր նրան անհանգստացնող և ծանր մտահո-  
գութիւն պատճառող հոգսը: Զատօն մի եզնից  
աւելի ոչինչ չունէր. այն էր նրա միակ և ամ-  
բողջ հարսատութիւնը՝ պարտքի հետ միասին, այն  
էր նրա թէ դործարանը, թէ մշակը, թէ խա-

նութն ու վաճառատունը և թէ ոսկին ու արծաթը, ակն ու մարգարիտը:

Բայց բանն այն էր, որ Զատօն իւր դժբաղ-  
տութեան մէջ այս անգամ մի եզնով էլ բաւա-  
կան բաղդաւոր էր համարում իրեն, որովհետեւ  
մի տարուց առաջ այդ մի եզն էլ չունէր՝ այլ  
իւր նորատի կնոջ հետ միասին մի տնաքանդ  
աղայի գրան համարեա մի փոր հացի «նօքար»  
էր, իսկ թէ այս, մարդու պատիւն ստորացնող  
«նօքար»-ութեան կամ սարկացնող ծառայու-  
թեան մէջ ինչ անտանելի չարչարանքների և  
անպատւութիւնների էին ենթարկւում երկուսով,  
այդ լաւ կը հասկանան կեանքի այն չարքաշ զա-  
ւակները, որոնց հասարակ անունն է՝ ծառայ,  
աղախին, բանուոր, մշակ և ստրուկ ու հպատակ.  
իսկ սրանցից աւելի նրանք, որոնք դատապար-  
տուած են եղել ծառայելու ժլատին, անգութին,  
աղանին, վաշխառուին, վայրենաբարոյ տգէտին,  
անհոգի հարստին, օտարին և անիրաւին կամ  
գաղանին:

Զատոյի ու իւր կին Նարգիլի սարկական  
ծառայական - պարտաւորութիւնները կամ տան-  
ջանքները հետեւեալներն էին: Նարգիլը պար-  
տաւոր էր աղայի ամբողջ ընտանիքի համար հա-  
մարեա ամենայն օր թեքերը վերքաշած, խմոր  
հունցել, և, թոնըի ալաւովն այրուելով, խան-  
ձուելով ու խորովուելով՝ միքանի տաշտ հաց

թխել, խմելու, լուացուելու, լողացնելու, մինչև  
անգամ հօտից, նախըրից ու երամակից յետ մը-  
նացած, — կամ կաղ, կամ հիւանդ և կամ նորածին  
գաւների, ոչխարների, հորթերի ու գոճիների  
համար, երկու-երեք վիթանոց կժով օրական  
քսանից երեսուն կուժ ջուր կրել ուսով, և այն  
էլ՝ բոբին ոտով. պարտաւոր էր սրբելու տունն  
ու դուռը (բակը) և աղբն էլ շալակով տանելու  
դէն ածելու: Այս վերջացնելուն պէս, առանց մի  
ըոպէ հանգստանալու, պէտքէ նստէր կամ աղ,  
կամ ձաւար ու տաք գեղ աղար և կամ աղունն  
ու սերմացուն խախալէր, վեր կենար վառէր  
կրակը և կերակուր եփերուց բացի, հանդից տուն  
վերադառնող շների համար էլ լակ պատրաստէր,  
նորը կարէր, հինը՝ լինէր այն շապիկ, արխալուխ,  
չուխա, շալուար, խուրջին, տոպրակ, կարպետ,  
ջեջիմ թէ չուալ, միենոյն էր, մատները մաշե-  
լով ու ասղահար անելով, պիտի կարկատէր: Նա  
պէտքէ բուրդը լուանար, ըրքը էր, գզէր, մանէր՝  
թոկ ու սամոտէն պարան ու ճոպան հիւսէր,  
տափագործ կամ նորագործ շալ գործէր, մաքրէր  
երեխանցը և լուանար ոչ միայն նրանց հագնե-  
միքն, այլև տակների քեչան, խալին ու կար-  
պետը: Երեկոյեան, քննելիս ևս, նաև պէտք է հա-  
նէր ամենի ոտնամանները, աղայի ու խանումի  
թեքը բաշէր, ցերեկով էլ գլուխները քթուէր:  
Նա պէտք է ջուր տաքացնէր թէ մեծերի և թէ

փոքր աղաների ու խանումների գլուխն ու ստքները լուանար, լուանալուց վերջն էլ, որպէս թէ իբրև քրիստոսաւանդ սովորութիւն, աշու ստքներիցն էլ խոնարհաբար համբուրէր, մէջքները բորէրմի խօսքով, ամենի պահանջն էլ կատարէր, ընթրիք տար նրանց, սփռոցը հաւաքեր ամանները լուանար, թարէբէր և ապա ձեռները նոյնպէս խոնարհաբար սրտին դրած՝ ամենից յետ՝ շէմքի մօտ ցրտումն արձանանար, մինչեոր մեծ ու փոքր ամենքն էլ բարեհաճէին քնել և ապա թէ ինըն ևս համարձակուէր քնել ամենից ուշ, միայն այն պայմանով, որ առաւօտն էլ արթնանար ամենից շուտ և, թացը չորացրած, չորացրած շորերի կամ գուլպաների փոշին թափ տուած հագնելիքները հագնելու մատուցանէր. և դարձեաւ, ուժն ինչ պէտք լինէր, և կամ ով ինչ պահանջէր, անպատճառ միմիայն նա պէտք է տեղն իմանար և խսկըն, առանց ուշացնելու, հանէր իշրենց տար, իսկ սխալուած կամ մոռացած դէպշում թքուէր, նախատուէր, անարգուէր, անլուր կերպով հայնոյուէր ու վայրենուն յատուկ դաշտանակով և կամ աքացով անողորմաբար ծեծուէր. եւ այսքանը դեռ ձմեռուայ պարտականութիւններն էին: Գարնանը դրանց հետ միասին նա պէտք է գնար աղայի մարգերը, արտերն ու ագարակը քաղնան անէր, չութուորին հաց ու կերակուր տանէր, հանդից վերադառնալիս էլ թթուա-

սէր խանումի համար թթուի բոխ, սիրեխ, ողորմակոթ, ճռնջոլ, շուշան, եփելու համար սինտրիկ, ձնէփակ, բանջար, զիմբէլ, փիփերթ, զանձիլ և ուրիշ շատ տեսակ աղցաններ քաղէր բերէր, եփէր ու աղային տաք-տաք ուտացնէր:

Սակայն ձմեռն ու գարունն աւելի փառքէին Նարգղի համար. բանն ու գործը կամ ստրկական տանջանքները կոռ ու բէգիառի ծանրութեամբ աւելի ևս շատանում էին ամառն ու աշնանը, երբ «կալ ու կուտն իրար էր խառնուում», երբ սկսում էին ցանածն ու հնձածը հաւաքել, կալ գցել, կալսել, քամել, խախալել, կրել ու տեղաւորել կամ հորերում և կամ ամբարներում ու թթոցներում:

Նարգղի լծակից Զատօն էլ պէտք է վարէր, ցանէր, ջրէր, հասցնէր ու հնձէր, կրէր, կալսէր, հորէր, աղէր, փուշ հատէր այզին չափարելու, գիշերն էլ տանն ու տեղին կամ աղայի ամբողջ հարստութեանը պահապան կանգնէր ու ամենափոքր բանի համար էլ պատասխանատու լինէր՝ ոտով, գլխով ու կաշուով: Այդ բոլորից դուրս, նա մեծ մասամբ մասնակից էր նաև Նարգղի պարտականութիւններին ու անպատճութիւններին, որ տալիս էին վերոյիշեալ տեսակ-տեսակ աղաներն ու իանումներն՝ որպէս ծտուաների ու համարիա ձրի մշակների հոգեհաններ:

Զատօն իւր որբութեան դառն օրերում այդ-

պիսիներից իւրաքանչիւրի ճանկն էլ ընկել էր,  
համարեա ամենի ձեռի թթուն էլ խմել էր ու  
շորուան խփշտել:—Մի սխալ արած, մի ծուռը  
բան բռնած ժամանակ, որքան յանդիմանու-  
թիւն, որքան նախատինք, որքան թուք ու մուր  
ասես, որ խեղճ որբը չէր ստացել: Օրինակ՝  
մէկը բանացրել, ամբողջ օրը տանջել, չարչարել  
էր նրան ու քաղցած թողել, միւսը վարձը կըտ-  
րել, ծեծել ու վոնտել տանից կամ կալուածքից,  
երրորդն օգուտ քաղելով նրա նեղ գրութիւնից՝  
վարձել և կիրակի օրերով նոյնպէս բանացրել էր  
նրան, չորրորդը սիրտ առնելով նրա անտէրու-  
թիւնից ու անզօրութիւնից, տարուայ վերջը, կամ  
պայմանի ժամանակը լրանալիս, մի սուտ գո-  
ղութիւն էր հնարել վզին գրել և տուգանքի փո-  
խարէն տարեկան ոռճիկը բռնել, ծեծել նոյնպէս  
ու բանտարկել տուել. և վերջապէս վերջինն էլ  
ամբողջ վեց տարի ծառայեցնելուց յետոյ, իբրև  
թէ լաւութիւն, բարութիւն էր արել—պսակել  
էր տուել նրան և վեց տարսուայ ոռճիկը հարսանի-  
քի ծախս գրել ու դեռ մի բան էլ վրան պարտք  
գրել թէ՝ «կամ մի տեղից պէտք է ճարես տաս,  
կամ վեց ամիս էլի կնոջդ հետ ինձ ծառայես»:  
Ահա այս էր պատճառը, որ խեղճ Զատօն  
ամեն օր և ամեն ժամին, թէ ձորում, թէ դաշ-  
տում և թէ լերան լանջում ձեռքերը դէպի եր-  
կինք տարածած՝ Աստուծուն օգնութեան կան-

չելով իրեն, աղաչում, պաղատում և խնդրում  
էր ասելով:—

—Ախ, Աստօծ ջան, եանի ինչ կը լինի, որ  
մի անգամ էլ ինձ աջողութիւն տաս, ինչ կը  
լինի, որ մի անգամ մի մհանով (դիսլուածով) էլ  
իմ ձեռքը միքանի կոպէկ գցես, որ կէսն իմը,  
կէսն էլ մէկից պարտք անեմ, մի եզն առնեմ  
ու արկիս ձէնն ածելով, ուրախ սրտով պոչը  
բռնած՝ մի՛, քշեմ, տանեմ վարս ու ցանքս իմ  
հօր, իմ պապական հողումն անեմ ու էս անհոգի,  
էս անողորմ ջնուգներին նօքարութիւն անելուց  
ազատուեմ...։ Ախ, եարաք աչքս բաց ու զածիս  
կը հասնեմ, այ ողորմած Աստւած:

Սակայն, Զատօն ուրիշ հնար չունէր երեք  
կամ չորս թուման փող ձեռք բերելու. նա եր-  
կար մտածելով, որսորդութեան մի միտք յղա-  
ցաւ. աշունքուանից սկսած մինչև գարնան բացու-  
իլը անտառում փայտի ձողերից հնարած թա-  
կարդներ լարեց, որ գոնէ մի քանի դալա (վայ-  
րի կատու) կամ աղուէս կալնի ու նրանց մոր-  
թու վաճառումից գոյացած արդիւնքով մի ար-  
շառ կամ եզն գնի: Բայց բանն այն էր, որ  
խորամանկ աղուէսներն էլ միշտ մօտենալով  
թակարդներին, զգուշութեամբ վերցնում էին  
Զատօյի շարած հացի կամ մսի պատառները և  
հեռանում: Այս անյաջողութեան պատճառով  
Զատօն խիստ յուսահատում էր: Երբ գնում էր

թակարտները դարտակ գտնում, ամբողջապէս լքանում ու տեղն ու տեղը փշրւում էր թէ հոգեպէս և թէ մարմնապէս:

— Ե՞ս, ուկ լինի սրա պէս քոռ բաղդը, որ ինձ համար անտակ ծովն ա ընկել ու ամենկին դուս չի գալիս,— զլխին պտտելով ասում էր ինքն իրան և ակամայ պատառները նորից շարելով թագարդների արանքներում, կոտրւած սրտով վեռագառնում էր տուն, ուր նրա խեղճ կինը նոյնպէս անհամբեր սպասում էր իրենց բաղդին անտառի խորքից՝ որսերի աշխարհում:

— Ե՛լի թալակդ բան չէր ընկել — միշտ յուսահատ հարցնում էր կինը:

— Ուր ա, թէ ընկելա. աղքատին Աստօծ արքայութիւնը Երբ ա տուել, որ հիմի տայ, — դառնութեամբ պատասխանում էր Զատօն:

— Զարար չունի, էլի հաւատդ կորցնիլ մի, համբերութիւնը կեանք ա. մի անդամ կը տայ ու լաւ կտայ, — իրեն յուսահատութիւնը թագցնելով, մարդու ամպամած յօնքերին ու աըրտմած դէմքին նայելով, յուսազրում էր չարտանջ նարգիզ հարսը, որ փափազում էր ազատուել նազ ու քիւզով ապրող խանումներին ծառայելուց և ամեն րօպէ նրանց թուք ու մուրը տանելուց:

Զատօն գիշեր ցերեկ մի զոյգ եղան մասին էր մտածում, Մի առաւօտ նա վաղ արթնանալով,

կնոջը յայտնեց, որ գիշերն երազում դալաներ էր կալել: Յուսատու երազից երկուսի յօնքամէջն էլ բացուել էր: Էլ սուրբ Կարապետ, էլ սրուէդ, էլ սուրբ Գրիգոր ու սուրբ Սարդիս չմասց, բուշորին էլ մատաղ, ճրագ խոստացան նրանք, եթէ երազն ի բարին կատարուէր:

Արդարեւ, երկի բնութիւնը՝ երկինքն ու երկիրը — հողն ու ջուրը, սարն ու անապուր վերջապէս խղճացել էին դառն ու տանջուած աղքատներին: Հաւատը զօրացած Զատօն այն օրը մի առանձին ուրախութեան ու տրամադրութեան մէջ էր. ուշք ու միտքը շարունակ թռչում էին դէպի լեռն ու անտառն, ուր սարուած կամ լարուած էին նրա այնքան անողորմ թակարդները:

— Զէ, սիրաս ասում ա որ, երազս կատարւելու ա, — մի կողմից ձեռքի բանն ու գործն էր անում, միւս կողմից իւր բաղդի վրայ մտածում:

Զատօն շտապեց գործերն աւարտել, ապա մի քանի ժամով անտառը գնալու իրաւունք ստանալ աղայից: Աղան զիջեց, իրաւունք տուաւ թէ չէ, Զատօն հրեղէն դարձած գիւղից գուրս թուաւ, մօտակայ բլրակի գլխին երեսն աղօթարանին դարձրեց և յուսազրուած խաչակնքեց. «տէր Աստուած, գնւ իմ բանն աջողաս, գնւ իմ կապուած բաղդը բաց անես...», ասաց ու նորից քայլերն արագացնելով, սլացաւ դէպի ան-

տառի խորքը: Եւ, երբ թակարդներին հասաւ ու  
տեսաւ, որ տրաքուել են և մէկի փոխարէն երկ-  
երկու դալայի գլուխ արանքներումը ջախջա-  
խել, էլ չիմացաւ, թէ բնչպէս բաւականութիւն-  
տայ իւր անյագ սրտին: Նա իւր բաղդաւորու-  
թիւնը դալաների դժբաղդութեան մէջ որոնած,  
խիստ ագահութեամբ հանդիպեց նրանց:

— Օխուայ, դարդահիդ (դարաւոր գահիդ) մատաղ, Աստւած ջան, հիմի որ դժոխքիցն ա-  
զատուեցի, հիմի որ ծռուած մէջքս ու տըտուզ-  
դրատեցի, հիմի որ եզներս առայ, — մէծ գոհու-  
նակութեամբ ցնծալով նա, շտապեց դալաները  
մէկ մէկ հանել թակարդների արանքից:

## Բ

Զատօն մի ժամից յետոյ՝ արդէն դալաները  
մաշկել էր և մորթիներն ուսը ձգած, հիւնուտ-  
թալից տուն էր գալիս: Թէ նրան էր նրա ու-  
րախութեան չափը և ինչքան նրա սրտի բեր-  
կրանքն ու բաւականութիւնը, չեմ կարող իսկու-  
թեամբ որոշել, միայն այսքանս կասեմ, որ նա,  
այն տրորուած, նուազած, լքացած ու տխուր,  
տրառմ յուսահատ և ստրկացած Զատօն, միանդա-  
մայն զուարթացել, աշխոյժ, սիրտ ու հոգի էր ստա-  
ցել — քայլում էր համարձակ և աներկիւդ, չնա-  
յելով այնքան ցրտին և ոտների տակը տրաք-  
տրաքուող, ճռճռթող մահացունչ ձիւնին, չնայե-

լով իւր բարակ ու պատուտուն՝ ձորձ հագուս-  
տին, գլխարկն էլ վերցրել էր կռան տակն առել,  
ու, խիստ բարձր և զիլ ձայնով «բայեաթին ու  
խայեաթին» իրար խառնած՝ երգելով — կլկլացնե-  
լով ու ելմէջներով իւր ձայնը հնչեցնելով և իւր  
բաղդի փշրանքներն ուսած, հետզհետէ իջնում  
էր բարձրից:

Անքան զառն էին եղել նրա, մեր գեղջուկ  
եղրօր օրն ու արևը ծառայութեան, ստրկու-  
թեան և տանջանքի աշխարհում, որ բաղդի ու  
յաջողութեան այնպիսի մի թեթև շարժումն  
անդամ, ձմեռուայ այն մահացունչ օրերն ու ժա-  
մերը նորա համար կարծես թէ գարուն էին  
դարձրել:

Երգի, բայեաթու և խաղի մինը վերջաց-  
նելով և միւսն սկսելով, նա գալիս էր գալիս, ապա  
կանգ առնելով ճանապարհին և մորթիներն ու-  
սից իջեցնելով, նորից անյագ հրճուանքով ու  
անմեղ հպարտութեամբ լցուած, նայում էր  
նորից, ձեռքի ափը մազներին՝ բսում, ժպտում,  
և, ևս աւելի եռանդով երրորդ, չորրորդ եր-  
գերն սկսում ու ոգեւորուում:

Գիւղին մօտենալիս կինը լսել ու ճանաչել  
էր ամուսնու ձայնը և օգայի սրահիկը դուրս  
եկած, սառող ձեռքերին փշելով, աչքը կարօտով  
հանդերին, լանջերին ձգած՝ փնտում էր նրան  
և խնդալով շշնջում: —

— Փառքիդ ու մենձու թենիդ մատաղ, Աստօծ ջան, խեղճ մարզս խաղ կանչելով ա գալիս, հալբաթ դալից, աղուէսից բանից կալել ա...

Զատօն, վերջապէս, ձայնը դադարեցնելով և լանջնուվայր դիմաց դուրս եկաւ կնոջ նկատելով, կան գառաւ։ Յղի և ծանրացած կինը նորա ուսի մորթիները նկատելով, ուրախութիւնից թեթևանալով կարծես, արշաւեց դէպի նա և ազահութեամբ ուզում էր գըրկել ու համբուրել նրան։ Զատօն շտապեց իւր յաջողութիւնն աւետել կնոջը։ Գեղջկուհին յափշտակութեամբ սկսեց շօշափել, շոյել մորթիներն ու հիացմունքով բացականչել։

— Վայ քէ, ինչ սիրուն-սիրուն մորթիք են է։

— Էս որ օրհնւած սարիցն ու բարոտ քոյիցն ես կալել, էս որ Աստօծն ա բանդ աջողելու...

— Է՛նէյ, էլ խօսալ մի, որ Աստօծ էսօր համ քեփս ա քեօքացրել, համ ձէնս ա բացել, համ էլ շատ զիւլիւմ դալէք են դալէքս երկինք գետենքը վկայ, Նարգիզ ջան, ամեն մինը տասը կարմիր թուման փող արժի, — պատասխանեց Զատօն և մորթիները ծանր իջեցնելով ուսից, չորսն իմիասին սիւնի ճակատից կախ տուեց խնամքով։ Սյնուհետև էլ երկուսով էին խելակորոյս կերպովնայում մորթիներին, իրենց բաղդ և փառքին և կարծես թէ չէին կշտանումնայելուց ու շոյելուց։

— Ասեցիր որտեղից ես կալել, — կրկին և զրկին հարցնում էր գեղջկուհին։

— Լղոցը գիտես։

— Վիհ։ Լղոցը։

— Հաբա՛։

— Վու..., քու ճարը շատ լլի, այ մարդ։ բացականչեց նա և մի առ ժամանակ, ահաւորուած կարծես, սկսեց մարդու երեսին պէլ պէլ նայել։

— Հը, քարձիկդ հու հաւի քարձիկ չդառաւ։

— Տնաշէն ոնց չդառնայ. մգեար դու զլիիցը ձեռն էիր վերկալել, որ մեն մենակ ու անեարաղ էն արնկեր գող ու գաղանի ձորերն ու բներն (որջերն) էիր մտնում։

— Հը. հաբա ի՞նչպէս էիր իմանում մարդուդ. հէնց իմանում էիր թէ լըպաստրակի աքացուց վախեցող կակինի տղէն եմ։ Ես տղամարդ եմ, տղամարդ. ինձանում ոչ երկիւղ կայ ոչ ահ։ Ես այսուհետև լիսամի բունը (որջը) մտնելուց էլ չեմ վախենալու, ուր մնաց թէ լղոցի ձորը, — պարծանքով ու ինքնազովութեամբ լըցուած։ Կնոջ առաջ իւր հեղինակութիւնն աւելի բարձրացնելու համար, մատնացոյց էր լինում նրան անտառի ամենահեռաւոր ու վտանգաւոր, մինչև անգամ ամենաանմատչելի ժայռուտներին և գաղանաշատ լեռներին ու անդունդներին, որպիսիք լղոցի ձորերն էին։

— Երբոր թալակների դիմացը դուրս եկայ  
ու տեսայ, որ մէջները որս կայ, էնպէս ու-  
րախացայ, էնպէս վրաթռայ, որ ահն էլ մտիցս  
ընկաւ, մահն էլ: Էս Ասծու օրինած անսառնին  
էլքոռի պէս ջուխտ-ջուխտ էին թալակների մէջը  
թափուել ու գլուխները փետերի արանքներումը  
ճճեխել...

— Օխուայ, Ասծու փառքին մատաղ, բատ  
հու բաղդներս միշտ կապուած չէր մնալու, —  
գոհութամբ աւելացրեց կինը և նորից սկսեց  
շփել մորթիները և երեսը քսել:

Այսպէս, Զատօն վերջապէս հասաւ իւր  
փափագին: Նա վաղուց էր վճռել, որ եթէ կա-  
րողանայ գոնէ մի եզը գնելու գումար գանել,  
իսկոյն թողնելու է ուրիշի համար աշխատելն  
ու չարչարուելը. ուստի շտապեց մոթիներին  
աղ ու շիբ անել: Դրանից յետոյ, մի կիրակի օր  
իւր բաղդը շալակած բազար տանելով, չորս հատը  
քսան և ութ ըուբլիով վաճառեց, որից երկու ըուբլի-  
ծախսելով կնոջ համար մի դերիացու և մի գլխին  
գցելու թաշկինակ գնելով, 26 ըուբլով վերադար-  
ձաւ տուն, մի շաբթից յետոյ աղայի հետ հաշիւը  
վերջացնելով, հրաժեշտ տուաւ իւր ստրկու-  
թեանը. ապա կնոջ հետ միասին ճանապարհ  
ընկաւ դէպի իւր պապական օդան, որն երկար  
ժամանակ անտէր և անմարդաբնակ, մնալով ա-  
ւերակուել՝ տեղտեղ հողը թափուել, փարպի-

ները փթել, բաց էր եղել տանիքը և չղջիկներով  
ու գորտերով լցուել, իսկ շէմքում արդէն խոտ  
ու բանջար էր բուսել:

Զատօն օտարութիւնից հին բունը վերա-  
դարձած ծիծեռնակի պէս, օդան կարկատելուց  
ու մաքրելուց յետոյ, շտապեց երեսուն բուբլի  
պարտք անել մի վաշխառուից և, աղքատակեր  
տոկոսը վրան գալով, մի տարէն ժամանակի 48  
ըուբլու բարաթ տալ նրան, յոյս ունենալով, որ կր-  
կին սարած թակարդներով մինչև գալնան բաց-  
ուելը միքանի դալա ևս կալնելով, կարող է պարտքը  
լրացնել և ժամանակին առանց դաւի դառա-  
բայի հատուցանել: Զատօն արդէն 56 ըուբլի  
փող ունէր: Նա այդ գումարով մի լուծ եզը գը-  
նեց և ամբողջ ձմեռը իւր հարազատ եղբայր-  
ների պէս պահպանեց մինչև գարունը:

Իսկ գարունը մի չտեսնուած և շատ անոյշ  
գրուն էր նրա համար. բոլորովին նման չէր այն  
գարուններին, որոնք անցել էին այքան դառնու-  
թիւն պատճառելով նրա սրտին: Այս գարունը  
ճնշուած Զատոյին համարձակութիւն և ստրկա-  
ցրած, զրկւած գիշատուած, և ոտնակոխ եղած  
Զատոյին՝ պղատութիւն, կարողութիւն ու ան-  
գնահատելի սեփականութիւն, մի լուծ կեանք,  
մի լուծ եղն կամ երկու հարազատ եղբայր էր  
տուել, և բացի դրանից, նարգիզն էլ, հէնց այդ  
միջոցին մի արու զաւակ էր ծնել: Գիւղը, հան-

Դըն ու արօտը, սարն ու քոլը այս գարնանը նը-  
րան աւելի անոյշ, աւելի և մինչև անգամ ան-  
չափ, անսահման սիրելի էին թւում, քան երբ  
և իցէ-իւր ամբողջ կեանքի հազուադէպ ուրախ  
վայրկեաններից մէկում:

Աննկարագրելի էր մանաւանդ այն ըոպէն, երբ  
Զատօն արօրն ու սերմնացուն պատրաստած, խին-  
դն երեսին, ժպիտը շրթունքներին և իւր սիրելի  
եղբայր եղների ականջը բռնած լծան տակն էր  
քաշում, իսկ կինն ամբողջապէս ուրախութիւն  
դարձած՝ կարմիր ու սպիտակ թելերից հիւսած  
սամուէններով էր շնորհաւորում մարդուն, և,  
մօտենալով լծուող եղներին, անվելջ համբոյր-  
ներ էր դրօշմում նրանց երեսին, պնչին ու ծը-  
նօթներին, և անմեղ հաւատով դառնալով երա-  
կնքին, պազատում էր Աստուծուն: «Տէ՛ր, վեր-  
նէին Աստւած, դու զսմաթ անես մեզ, դու  
կապները պինդ անես, դու աջողաս մեր բանք  
այսուհետեւ, մեղք ենք, խեղճ ու նաչար ենք...»:

Եղները լծելուց և արօրը լծնովը ձգելուց  
յետոյ, Զատօն նոյնպէս, աղօթարանին դառնա-  
լով, կրկնեց կնոջ խնդրուածքն ու եղները քշեց,  
իսկ կինը իրեխան գիրկն առնելով, հետեւց նու-  
րան դէպի իրենց սեփական և պապական վա-  
րելահողը, որի չորս կողմերում արդէն ծրել ու  
վարում էին նրա բաղդաւոր համագիւղացիները:  
—Բարի լնւս, բարի աջողում ձեզ.—Զատօն

աջ ու ձախ ողջոյն տալով ամենին, կարծես ու-  
զում էր նրանց ուշադրութիւնն իւր լծկանների.  
վրայ դարձնելով, նրանց իրեն և իրան էլ նրանց  
ուրախակից անել:

—Բարի լնւս, բարի աջողում ձեզ, հարևան-  
ներ. —կրկնում էր Զատօն բարձր ձայնով:

—Ասծու բարին, Խաչատրնը, կապները պինդ  
ըլի, Աստւած քեզ զսմաթ անի, ոնց որ քու-  
սիրտը կուզի:

—Վարըդ շատ ըլի, էհէ Խըչատրնը. խեղճ  
ես, եթիմութիւն շատ քաշեցիր, թող հիմի Աստ-  
ւած տայ, որ եթէ չոր քարի վրայ էլ սերմը  
դցես, կնանչի ու մէկին հարիր, մէկին հազար  
ծաղկի ու պտղի:

—Աստւած սիրտդ աւելի ուրախացնի, բանդ  
աւելի աջողայ, Խըչատրնը, վերջապէս հասար  
մուրացիդ. շատ լաւն են եղներու, դոչաղ կաց,  
այսուհետեւ հէնց մի գլուխ քշիր ու վարիր, էլ  
վախես ոչ, ով աշխատի, Աստւած էլ նրան կտայ,  
չի կորցնիլ...

Այս մտերմական, անմեղ ու անկեղծ բարե-  
մաղթութիւններով անչափ ու անսաման կերպով  
քաջալերւում էր Զատօն, շնորհակալութիւն յայտ-  
նում և «իստիարաբար» հազարով, յառաջ քշում  
եղները, որոնցով կարծես թէ միանգամայն և բո-  
լորովին մոռանում էր իւր այնքան տարուայ դա-  
ժանելի ծառայութիւնները. կարծես թէ այլևս էլ

ո՞չ դարդ ունէր և ո՞չ էլ ունեցել էր երբէք. մի խօսքով, այսօրուայ նրա տրամդրութիւնն անվիճելի կերպով գերազանցում էր այն օրուան և ժամերին, այն սեասրտած ու ամպամած տրամադրութեան, որ մօտ անցեալում, այսինքն՝ այնպիսի գարնան օրերում փուշ ու տատասքով էին լցնում նրա տանջուող սիրտն ու հոգին, երբ ինքը զուրկ, բայց աղայի եղներով, աղայի արօրն ու սերմն նրա կոսկիտ և անլուր հայհոյանքներով լի հրամանի ձնշողութեան տակ էր հանդը դուրս տանում, որ—նրա համար աշխատի, աանջուի ու չարչարուի. առաւօտից մինչեւ երեկոյ, մինչեւ մութը նրա համար հող լիզ տայ, նրա համար ջարդուի ու փշրուի անվերջ և անվարձ համարեա:

Չատօն վերջապէս իւր խամացած ու խոպանացած վարելահողը հասաւ, «հօծ» արաւ, լծկանը կազնեցրեց, արօրը սարքեց ձղմակը տեղը ձգեց, չոքեց, հողի մէջ, մի բուռը հող վեր առաւ երեսը քսեց, պաղատալից աչքերով նայեց գէպի երկինք, աղօթք մըմնջաց և մաճը բռնելով, «Չար, օրիննեալ է Աստօծ» գոչեց ու հողի երկայնութեամբը ծրել ու վարել սկսեց:

Գ.

Աննման և սքանչելի էին գարնան խորհրդաւոր և կենսատու տեսարաններն այն անմեղ վայրերում, ուր ամեն մի երկոյթ կարծես աս-

տուածային շունչ, աստուածային անմահութիւն ու մեծութիւնն էր իւր մէջ բովանդակում: Երկինքը յստակ, ինչպէս հայելի, անտառը զուգուած, որպէս փեսայ, դաշտերը նորահարս, հոտաղները, հովիտները, հովիններն, առուներն ու թոշուններն էլ իբրև մի մեծ հարսանիքի փողհարներ.— բնական և աննկարագրելի քաղցը ներդաշնակութեամբ ձայնակցած իրար, սար, ձոր, բլուր ու հովիտներն ու այր մի մի նուագարան դարձրած՝ երգում ու վառում էին իրար և դիւթում, կախարդում մարդու հոգին ու միտքը:

Արևը հեռուում դէպի երկինք ցցուած բարձունքների վրայ դեռ էլի ամբարուած ձիւները փայլեցնելով ու հետպհետէ ողջունելով նորականաչ անտառներին և լանջերին, ապա իւր ոսկեվառ ճառագայթները սփռելով դաշտ ու հովիտների, առուակների ու լճակների վրայ և իւր անհամար ճաճանչները փշրելովնրանց մէջ, հազար ու մի գոյնով միլիօնաւոր բիւրեղներ էր ձևացրել ամենուրեք, մանաւանդ ցողաշատ դաշտերում, ուր կարծես թէ մարգարտի փոշիներ լինէին ցանուած: Առուակները դուրս գալով իւրնց մայր աւագան կոյս անտառներից, խորհրդաւոր մըմունջներով սահելով դէպի վայր, սիրոյ քաղցը գուրգուրանքով զգուելով իրենց սահանքներին, միախառնուելով իրար, ապա վտակ առ վտակ,— մի տեղ հանդարտ ու խա-

դաղ, միւսում յորդորուելով ու խաղս ելնելով, երրորդում գլուխով, չորրորդում օձածկ պտոյաներով, ուր մոլոր և վերջապէս ապառաժներին հասնելով՝ նախ վշշալով և տպա շառաչելով ու փրփրալով վազում էին յառաջ, ու, որքան հեռանում ու ցածրանում և ցրւում էին տափարակներում ու մարգագետիններում, այնքան աւելի էին խաղում, շողշողում ու փայլփայլում արեգակի անվերջ ու անհամար բիւրեղների հետ:

Բայց, յարութիւն առած ընութեան ծոցում միթէ կարելի է միմիայն մի հրաշալիքով գրաւել ու կախարդւել, այնտեղ ամեն մի շունչ յանկարծ քեզ իւր կողմն է քաշում, ուշք ու միտքդ տանում և դու զմայլում ես ու աչք անդադար ուղում ես մի տեղից դէպի միւսը թոցնել և ականջդ այս ու այն կողմը դարձնել։ Տաւարների բառանչիւնը, հովիւների սրնգի ու պկուի անոյշ մեղեղիները, մեղուների բզոցը, արտօյտի գեղգեղումն, խոտերի, թփերի միջով շների առաջ ահարեկուած ոստիւններով փախչող նապաստակները, ժայռերի վրայ կագաւների անմեղ կղկըզն ու կրկչոցները, թփից թուփ, լանջից լանջ, աջ ու ձախ՝ թւները պտպտուրիկ, երգներն ու ծլւոցները քացրիկ, կտուցները միրուն թռչունների պտոյտները, կոռւնկների բարձր բարձր շարանները, գարնան բացումն ու բուրումն արագ-արագ յայտարարող յօպօպների «յօպյօպ-

ները», գառների և ուկերի մայիւնն ու մկկոցը, պատամի հովիւների անմեղ խաղերն ու վագելը և վերջապէս վարուցանքս անող աշխատաւորների պարզ խօսակցութիւնները անհուն բերկրանք ու ցնծութիւն էին պատճառում մանաւանդքնութեանը կարօտած մարդուն և կարծել տալիս, թէ հէնց այն է դրախտ կոչուած այգեստանն ու բուրաստանը, որ եզւակայումնեն հաւատաւորները։

—Օրխնեալ է Աստօծ, քիշր, վրա քշիր...

«Զարը խափան, բարին առաջ, ետ արի»։

—Քաշեցէք, արեներիդ դուրբան։ Եզներջան, քաշեցէք։ հա. հօ... հօ, հա...—պաղատում էին հօտաղները։

—Քշիր, ծովլ մի.տղա, քշիր, դիւզ (ուղիզ) քշիր...»

—Հա, հօ...

—Հօծօծ... Հօշ, Հօշ։ Աղա, ու եղանն իշտ արա։ Կոտրեցիք, խոփն ու ձեիչը կոտրեցիք, հօծօծ, իշտ, իշտ...»

Աղա, տօ վիզներդ կոտրուի, իշտ արէք, է։— զայրանում էր մաճկալը և կախ ընկնում մաճից։ —Իշտ, իշտ, վծհօծ...—շտապով կանգնեցնում էին հօտաղները։

Եւ, երբ «հօշից» (արգելքից) գութանի խոփն ապատում էին, մաճկալը նորից վրա էր հարում մաճին ու կրկին անվտանգ փափուկ հողի մէջ խրում խոփը. ապա՝ յանկարծ նշան տալով ամե-

նին, մինմենակ բարձրացնում էր իւր հեղինակաւոր, առաջնորդող և ահարկու ձայնը, որպէս խմբապետ և երգում ու կանչում.

«Չարն անցաւ, օրիննեալ է Աստօծ, հօհօ, հօհ», որին իսկոյն հետեւում էր. «Վարենք կանանչի, հօհօ, հօհ, վարենք, կանանչի, հօհ, հօհ», ամբողջ հօտաղների համերգը, որով արդէն ըսկում էին ևս աւելի դիւթել ու զմայլել լսողին:

Զատօն ևս յետ չէր մնում իւր հարևաններից. նա էլ էր հատ հատ երգում և իւր արիւն քրտինքով ձեռք բերած սիրելի Աբովաշ ու Խընձոր եղների ուսին և արեին դուրբան լինում. նա էլ էր փափագում, որ վարածն ու ցանածը ծլի, կանանչի, կարկտից, տօթից, մկներից ու մորեխից ազատ կանանչի, միայն նրա վարը—արօրը մի լծնանի էր, հօրիքչիներ չունէր, որ հետները խմբով երգէր, կինն էր նրա միակ ձայնակիցը, այն էլ գիւղական կեանքումն ընդունուած բան չէր, որ քթկալն իջեցնէր, բերանը բաց անէր և համարձակուէր բարձր ձայնով կամ խօսէր և կամ երգէր. այդ որպէս թէ խիստ ամօթ էր...

Միսիթարականը, սակայն, այն էր, որ, ինչպէս զոյգ եղներն, այնպէս էլ երկու ընկերները—մարդ ու կին, կարծես նոյնպէս իրար հետ լծուած՝ ամեն օր դաշտ դուրս եկած աշխատում էին ու օգնում իրար:—կինն ուղղութիւն տալով

ծրերին ու եղներին, «Ետե՛իցս եկէք, աղպէրտինք ջան»-ով խնդրելով՝ երեխան գրկումը, ծիծը բերանին, գնում էր առաջներից, իսկ ամուսինը խփել չղմշելով նրանց, ճիպոտը պտտելով ու աղաչելով, փաղաքշելով նոյնպէս, քշում էր ետեներից:

Եղները գէր, կինն օգնական, նորածին և այն էլ արու զաւակով ուրախացած Զատօն, օրական միքանի անգամ ճաշթող անելով, տասն օրավար էլ կվարէր ու կցանէր, բայց այնքան սերմը չունէր, ուստի երկու օրավարից աւելի չկարողացաւ ցանել: «Ե՞ն փառք իրան, եթէ տայ, երկու օրավարից էլ կտայ», — գոհութեամբ ասում էր նա:

Մի ամիս գեռ չանցած հողը կանաչեց, կանաչը տափի երեսն առաւ: Զատօն մի կողմից կանաչ արտերովն էր ուրախանում ու յուսադրում, միւս կողմից զոյգ եղների և զաւակիտէր գառնալով: Բայց ինչ ասել աղքատի քոռ բաղդին. հակառակի պէս հէնց այդ տարին չորային արաւ, երկնքից նամ չկաթեց ամենակին և խեղճ Զատօյի «ամակը ջուրն ընկաւ»: Արտերը ճշմարիտ է սկզբում բարձրացան, բայց հէնց հասկը ծաղկելիս ու հատիկ բռնելիս, տապից, տօթից ու խորշակից խաշուեցին, խշկուեցին և շատ վտիտ ու նուազ պտուղ բռնեցին:

Դորանով էլ չէր յուսահատուիլ մոռացուած-

և չարքաշ գիւղացին, եթէ միայն պատուհասներըն ու արհաւիրքներն իրար չհետևէին—եթէ վնասը վնասի յետևից չհասնէր նրան։ Ասուածէ թէ՝ «հօտի մէջը վայ մէկի տիրոջը»։ անիւրաւ գողերը գիւղի նախրի մէջից աղքատի եղները քշեցին։ Խելօք Արռաշին անդարձ տարան ու մարսեցին, իսկ գիժ Խնձորը պողահարելով նրանց, վզի թոկը կտրտելով, յետ էր փախել դէպի իւր տիրոջ տունը։

Չատօն կնկանից, կինը Չատոյից աւելի էին սիրում Խնձորին։ կարծես թէ ոչ թէ կովից, այլ նրանց մօրից ծնուած և հարազատ եղբայրը լինէր։ կինն արտասուքն այտերին, եղբայրը մեռած քրոջ նման, քողը երեսին քաշած՝ գողացուած եղան համար լալիս էր անդադար, իսկ Չատօն, թէև ինքն էլ անմիտար, սակայն տըղամարդի տոկնութեամբ միտիթարում, յուսագրում էր նրան։

—Ոչինչ, յոյս Աստւած, հալբաթ թէ էլի մի ողորմութեան գուռը բաց կանի մեզ համար. սգալը լաւ բան չի, աղօթք արա, թող գլուխս սաղ մնայ. եղած չեղած հաշանս կհաւաքեմ, միշից էնքան խրփուկ կլինի, որ մի առժամանակ բողազներս կպահի, էնքան էլ դարման կը հաւաքուի, որ մեր Խնձորին հերիք կանի։ Մեծ դարդներս մեր պարտքն ա, որի տալու ժամանակն էլ հլա հեռու ա. չուել էն վախտը հալբաթ

թէ Աստծով էլի մի քանի դալա կը կալնեմ ու պարտքս կը տամ, ի՞նչ ես վախենում։ Զէոր ասած ա թէ՝ «յոյսը լաւ բան ա»։

Ասացուածին խորը հաւատալով Չատօն և ամառուայ տապն ու տանջանքները տանելով հանգում, հնձած խորշակահար արտերից ընդամենը քսանուհինգ փութ ցորեն հանելով, մնացածը դարման դարձաւ իւր սիրելի եղբայր Խնձորի համար։

Դարմանը չոթալն ածելուց յետոյ, նա իւր նման միայն մի եղնատէր աղքատի հետ ընկերանալով, վարուցանքն արաւ կրկին, մի քանի քաշան վառելափայտ իշեցրեց անտառից, օդան նորից կարկատեց և բարձրանալով անտառը, էլի նորոգեց իւր յուսալից թակարդները։

Դ.

Աշունն անցաւ շուտով և բարբարոս ձմեռը նորից բռնացաւ, նորից սարսեցրեց աղքատներին։ Այս անգամ, սակայն, չքաւոր Չատոյի ցաւը միայն ձմեռուայ խստութիւնը չէր, այլ այն, որ իւր այնքան սիրած, այնքան փափազով հազիւ ձեռք բերած եղբայրը, իւր միակ յոյս ու ապաւէն Խնձոր եզը ձեռից գնում էր, իսկ անիրաւ կզները կամ դալէքը նորից կածես գետնի խորքերն էին քաշուել, դուրս չէին գալիս. թակարդները մնացել էին դատարկ, որով ան-

հուն յուսահատութիւն էին պատճառել նորան և վիրաւորել, կարծես մահու չափ:

—Վաշ. Էլի կապուեց բաղդս, —անտառից վերադառնալիս ամեն անգամ դառնութեամբ յիշում էր նա: Բայց այս դառնութիւնն աւելի թունաւորւում էր գոռ պարտատիրոջ դժոխային պահանջով:

«Փնդս, փնդս, թէ չէ համ եզդ կը խլեմ, համ ուտելու հացդ ու սոված կը թողամ, ...»:

Եւ, չնայելով Զատոյի ու կնոջ աղաչանքներին, մրմնջալի պաղատանքներին, չնայելով նրանց անհամարձակ, վախվիսելով աղային մօտենալուն և կնոջ նրա առաջը չոքելուն ու պիզձնեռները համբուրելուն, այնուամենայնիւ, լըսում էր նոյն անողորմ և ահաբեկող ձայնը, —

«Փնդս, փնդս»:

—Աղա ջան, աղաչում ենք, երկու շաբաթ էլ համբերի բալքի մի տեղից ճարենք տանք:

«Անկարելի ա, փնդս, էզուց ծէգին հետ փնդս...»:

Զուր չի ասուած թէ՝ «բռնաւորից աղաշանքով բան չես շահիլ»: Արդարե, ոչ արտասուքի հեղեղները, ոչ պաղատանքներն ու խնդիրները, ոչ խոնարհուելն ու առաջը չոքելը ոչ մի հետեանքի չէին հասցնում. աղայի ասածն ասծ էր և նա անողոք էր զրա մէջ. նա ոչ ամաչում էր ոչ խղճահարւում: Եւ վերջապէս նա Աստու-

ծուց էլ չէր վախենում. և ինչու վախենար, քանի որ հաղար, հաղար անգամ փորձելով աղքատի աստուծոյ կուրութիւնը, նրա աչքի առաջ համարձակ շարունակել էր իւր անգամութիւններն ու անիրաւութիւնները և միշտ էլ անպատիժ մնացել:

Այս ոչ մի զիջողութիւն և ոչ մի պայման. աղան զօրեղ կերպով մատը թափահարելով իւր ստրուկների վրայ, պահանջում էր իւր փողն, ու, կրկնակի, եռակի տոկոսը, վաշխը: Զատօն ու կինը յուսահատ, բեկուած սրտով, ձեռքները ծոցներումը, աղքատի աստուծուն ատելով, քաշուեցին իրենց նորից աւելուելու վտանգին սպասող խրճիթը, որի մի անկիւնում իրենք էին տեղաւորուած, միւսում Խնձորն էր կապուած: Այստեղ նրանք մնացել էին տրտմած ու քարացած: Առաջն ածած խոտը Խնձորն կերել, նըստել էր և բերանը փրփրացնելով երկար ու քաղցըը որոճում էր, ապա երբեմն վշշացնում և երբեմն էլ որոճելուց դադարելով, տնքում, ինքն իրան կողքը լիդ տալիս, ու, կարծես մի ինչոր բան զգալով, փնչալէն դէպի ինքն արնաէր դարձած տէրերին նայում, նրանց աչքն ու յօնքը պահում:

Այսպիսի վայրկեաններից մէկում Զատոյի կինը յանկարծ զգաստանալով քարացած դըութիւնից, աչքերը արցունքներով լցրած մօտեցաւ

Խնձորին, որդու նման գըկեց նրան, մորմոքուելով ու կարօտով պինդ կուզովը փաթաթուեց և խիստ անյագ կերպով ջերմաջերմ համբոյլներ տալով պնչին, այտերին, ճակատին ու աչքերին, լուռ և անվերջ արցունքներ սահեցրեց իւր արցունքից այրուած այտերի վրայից։ Զատօն նոյնպէս լուռ էր ու լցուած, բայց աշխատում էր մասամբ թագցնել իւր արցունքները և կնոջը քաջալերել։

—Լաւ, Նարգիզ, երեխայ հօ չես, ի՞նչ ես լաց լինում։

—Է՛. Ի՞նչ անեմ, ի՞նչ սև հողը գլխիս տամ, որ լաց չը լինեմ. էս ա էլի մեր կարողութիւնը. էս էլ էգուց պարտքատէրը գալու ա, որ տանի. կարկուտս նրան տանի, նրա համար եմ բերանիս պատառն էլ յետ քաշել ու սրան ուտացրել, —արտասուահեղձ հեկեկանքով պատասխանում էր գեղջկուհին և նորից փաթաթուելով, եղջիւրներից բոնած կրկնակի համբոյլներ էր տալիս կենդանուն։

—Դէ լաւ, է, ամօթ ա։ Վահ, դօրթոր երեխայ ա դառնում։

—Ի՞նչի. դու չը լսեցիր, ի՞նչ ասեց...։

—Որ լսեցի, ի՞նչ. նրա հէրն էլ անիծած, շատ էլ վախեցնում էր, եղոյ. կը թողամ, որ տանի. իմ պարտքը 48 մանէթ ա, եզս հարիր, ոնց կհամարձակուի ոնց կը տանի. էն հօ արինս

շաղ կտամ, —ոյժից վեր և ակամայ կեղծ վստահութեամբ կնոջ առաջ պարծենում էր Զատօն։

—Հա, վայ գլխիս. էդ էր պակաս. միթամթէ աշխարիցս լիացար, որ արինդ էլ շաղ տասմարդու երեսին նայելով, հեկեկաց կինը։

—Հաբա ի՞նչ ասեմ, որ էսպէս ամաչեցնում ես ինձ. թէ դիչաղ ես, լաց լինելուդ տեղաքաղօթիր սաղ մնամ, որ գնամ մի տեղից ճարեմ, քերեմ իրան ուացնեմ։

—Ո՞րտեղից, ուր ա, որ աչքը բաց անի աստուած...։

Այս դառնութեամբ Նարգիզը մի առ ժամանակ, կարծես Աստուծուց դժգոհ, լացն ու հեկեկանքը զսպելով, արմունկը ծնկանը, թաթը քնիրակին (քունքին) դրած՝ վշտակէզ սրտով ամպամած յոնքերի տակից նայում էր բոցոտուող կրակին, որի բոցերն ու կայծերը նոյնքան անհասկանալի և անխորհուրդ էին նրա համար, որքան և այն, թէ ինչո՞ւ այս անիրաւ աշխարհում մինը պէտքէ առատ ուտէ, խմէ, հագնի, զուգուի, անհոգ՝ ոչ ցանի, ոչ հնձի, թըռչունի պէս կեանք վարի, տանի, տիրի, գերէ, ուրախանայ, բաղդաւոր օրեր տեսնի ու ցնծայ, իսկ միւսը քաղցած, ծարաւի, մերկ, ահը սրտումը, մահը մտքումը սրան նրան գերի գառնայ։ ինչո՞ւ մինը պէտքէ անչափ ունենայ, իսկ միւսն անհամեմատ ոչինչ չունենայ։ ինչո՞ւ մինը պէտքէ

ծառայի, միւսը ախրանայ, հարստանայ, ինչու  
չպէտքէ արդարութիւն լինի, եթէ կայ Աստուած  
և ամենին էլ նա է ստեղծել:

Բայց, իսկապէս Զատոյի գրութիւնն աւելի  
դժուար էր. նրա սրտակէզ մտահոգութիւնն ու  
որմոքուին աւելի կարեկցական էր, քան Նար-  
գինը, որովհետեւ վերջինս բացարձակ յայտնում  
էր իւր սիրտը լցուած դարդն ու դառնութիւնը,  
իսկ Զատօն թագուն, ներսիցն էր այրւում, խո-  
րովւում, չցանկանալով կնոջը ցոյց տալ իւր թու-  
լութիւնը, սա աշխատում էր շատ չկոտրուել  
նրա աչքում և կոտրել նրա սիրտը. այլ աշխա-  
տում էր տղամարդութիւնը պահել, որքան այդ  
հսարտուր էր մինչև վերջին վայրկեանը: Սա-  
կայն, այդ կեղծ և ամեղ գրութիւնը իսկոյն  
կարդացւում էր նրա թախծալից և ակօսուած  
դէմքի ու ամպամած յօնքերի վրայ:

Ծովն ընկածի նման, ճշմարիտ է, մեր գեղ-  
ջուկ եղբայրն աշխատում էր կեանքի հալածող  
ալիքների հետ կոռւելով մի կերպ լողալ, զոնէ  
մի ցախից բռնել ու ափ դուրս գալ, սակայն  
նրա թոյլ նեցուկները խիստ անյօյս էին: Օրի-  
նակ՝ նա մի կողմից յուսագրւում էր թէ՝ «էդուց  
ոնց որ լինի մի տեղից 48 մանէթ կը ճարեմ ու  
եզս կազատեմ», միւս կողմից էլ սարսափում  
էր մտածելով թէ՝ «մի դուցէ չըճարեմ ու աչ-  
քիս լիսը հանեն՝ եզս քշեն ու տանեն»: Այս

մտքերը հրէշներ էին դարձնել և միանգամայն  
ահաւորել նրան:

Զատօն նստել էր օջաղից ծռանց, և մերթ  
նայում էր իւր սիրելի եղբայր Խնձորի փայլուն  
աչքերին ու փրփրալից որոճին, մերթ բաղդից  
խոռված իւր վշտագէմ Նարգիզին ու յուզւում  
և ալեկոծւում գաղտնապէս: և, հէնց այս գաղտ-  
նիքի մէջ էր, որ փշուում էր ու խորտակւում  
նրա անմեղ և անզօր հպարտութիւնը. նա սրտի  
այս գառնութեամբն զգում էր, որ ինքը գերի,  
ստրուկ էր դառնալու աղային, որի խօսքից, եթէ  
մորթուէր էլ, անողոք տանուտէրը, անարդար,  
կաշառասէր ու խաթթամոլ դատաւորն անց չի  
կենալու, այնպէս որ, եթէ նոյն իսկ ինքը պարտ  
էլ չը լինի, բայց աղան, խղճմտանքը ոտի տակ  
տուած, ասիթէ պարտ է, նա իւր ծայրը տափակ  
մտրակը և կամ տմկած հոնի ճիպոտը իւր  
խեղճ գլխի, աչքի ու յօնքի վրայ փթուրփթուր,  
կտորկտոր անելով, պէտք է անպատճառ առնի  
և տայ ու երեկոյեան գնայ գէղին ոսկին առնի,  
կարմիր գինին խմի և առնոտ խորովածն ուտի ու  
բեխերը սրելով դուրս գայ սրա նրա վրայ գոռ-  
գոռայ, սրան նրան, նոյն իսկ հէնց իւր գուար-  
ճութեան համար էլ մտրակի տակ զցի:

Զատօն գարուրանքով տեսնում էր նոյնպէս,  
որ իւր հազիւ կարկատած կամ նորոգած ծիծեռ-  
նակի բունը, այսինքն՝ իւր հայրական անշուք

և աղքատ խրճիթը նորից ուզում են աւերակ դարձնել և կտրել ու մարել օջաղի նուազ ծուխն էլ, որ հէսց նոր էր ծխել սկսել: Նա սրտի դառնութեամբ յիշում, պատկերացնում էր, այնքան թուքն ու մուրը, այնքան արհամարհանքն ու անպատւութիւնները, որ տուել էին նրան այն տեսակ-տեսակ խանումներն ու աղաները. Երբ յիշում էր նոյնպէս, որ նորից պիտի վերադառնան ուրիշի դուռը, ուրիշի գրանն ու ուրիշի հողումն աշխատեն, տանջուեն ու ֆնացած կեանքներն էլ մաշեն, նրանց դաժան աչքն ու յօնքը պահելով—ահ ու դողով մի կտոր հաց ուտեն, ինքն իրեն մոռանում էր և այնքան խորասուզ-ւում թունաւոր մտածմունքների մէջ, որ մարդ նայելով նրա քարացած դրութեանը, երբեմն էլ կարծում էր, թէ արդէն ուշըը կորցըել է:

— Ո՞հ, Աստւած, ինչու ստեղծեցիր ինձ, տանջելու համար,—մրմիջում էր նա:

— Ա՞խ, Աստւած, Աստւած, բաղդից զրկնդ Աստւած,—մորմոքուելով հառաչում էր կինը, նորից նայում ինձորին և իւր ճակատը բռնում։ Ահա այս դարդ ու վարամով համակուած, մարդ ու կին ամբողջ գիշերն իրենց եղբայր ինձորին հրաժեշտի համբոյըներ տալով և անքուն ու արտասունքից այրուած աչքերով թէպէտ լուսացըին, սակայն չգիտէին թէ ինչպէս պիտի բաժանուէին նրանից, որովհետեւ բաժա-

նուել ինձորից, այդ նշանակում էր, թէ զրկներից խլել նրանց երեխան և աչքների առաջը ջուրը նետել նրան։

Առաւոտը ու լուսացաւ Զատոյի համար։ Տանուտէրը, վաշխառուն և սրանց կամակատարները, մինը մտրակն առած, միւսները դադանակները, մազոտ քուրքները հագած, համարձակ աւազակների նման գնում էին դէպի օդան։ Այն միջոցին Զատօն, ամենածանր մտածողութեան տակ, գուրս եկաւ նրանց առաջ և վշտից խեղտուող ու ընդհատւող ձայնով սիրտ արաւ մէկ էլ խնդրել, որ խղճան իրան և միքանի օր ժամանակ տան որ փողը ձարի։ Բայց, զուր դարձեալ, եզը խիստ դուր էր եկել աղային, նավադուց էր ասել թէ՝ «Էն եզն ամենելին աղբատի եզը չի, հարիր մանէթ նաղդ փող արժի, ճանկս եմ գցելու», ու, մերժեց։

Զատոյի յոյսի այն վերջին թելն էլ կտրուեց. այնուհետեւ աներեակայելի և աննկարագրելի էր նրա վիշտը, որ կարծես թէ սրտի բոլոր արիւնը զլուխն էր խփել։ Աւազակային խումբը երբ ներս մտաւ եզը դուրս անելու, Զատօն ու կինը ամբողջապէս արտասուքի հեղեղ դարձած, փաթաթուեցին իրենց եղբօրը և համբոյըներով հեղեղեցին նրան ևս։ Ապշել ու վշտացել էր նաև կենդանին. կարծես նա էլ էր հասկանում այն չարութիւնը, այն անդմութիւնն ու վտանգը, որ

մօտենում էր իրեն. Նա ևս չուած աչքերով և ահուած հայեացքով նայում էր դէպի անծանօթները, դէպի իւր տիրէջ թշնամիները, իսկ տէրերը դեռ փաթաթւում էին նըան. կենդանին մոլնգում ու փախուստի էր դիմում և ուզում էր թոկը կտրի, կարծում էր երկի, թէ հանդի աւագակներն են. Նըանք թոկը յետ արին սիւնից և եղը դուրս քաշեցին օդայից, բայց կենդանին խրանեց յանկարծ և թէ տէրերին և թէ յափշտակողներին բաւական տեղ քաշ տուեց դուրսը: Այստեղ Զատօն համարեա ցնորուելու չափ շփոթուած դրութեան մէջ մի քանի վայրկեան, կնոջ հետ միասին, թէպէտ անորոշ և անհաւասր դիմագրութեան փորձ արին, սակայն մըտրակների և դադանակների հարուածները յետ մղեցին նըանց և եղը քշեցին, տարան, իսկ Զատօն ու կինը, եղբայրը թաղած եղբօր ու քրոջ նման կարծես գերեզմանատնից վերադարձան օդան, ուր ամբողջ օրը զառն հեկեկանքներով և անվերջ մտածմունքներով անմիթթար սզի մատնուեցան:

## Զ.

Միւս օրը մառախուղը քաշուելով դաշտերից, գնացել էր հեռու, բարձր սարերի վրայ ամբար-ամբար եղել ու կիտուել: Զիւնով ծածկուել էին սար, ձոր, ձառ ու ծմակ, թուփ ու մացառ

և այս վերջիններիցո ամեն մինը մի մի դէղ, մի մի հսկայ էր դարձել.

Փոթորիկ էր վերկացել...

Եւ, այն ձիւնաբերձ լեռների գազաթներից, կիտուած ամպերը հետզհետէ նուազելով, ծխուել էին սկսել դէպի վեր-վեր. իսկ երկնքում եղած մութն ու մայլ ամպերն իրար խառնուած, խիստ հալածուում ու ալէկոծուում էին, կարծես Զատոյի սրտի, Զատոյի բաղդի պէս:

Դիզուած ձիւնն ըստ երկոյթին թէ գիւղացուն և թէ քաղաքացուն առատութեան յոյս էր ներշնչում, իսկ թէ ազգերի ու ցեղերի, տէրերի ու հպատակների, լծուածների ու ազատների, նաւորդների ու ճանապարհորդների, պանդուխոների ու որբերի, այրիների, աղքատների ու պարտքատէրերի համար ի՞նչ էին դուշակում երկնքում յուզուող ու հալածուող տմպերը, այդ խիստ գժուար էր գուշակել ու մարգուէանալ, որովհետև այն անհուն հեռաւորութիւնից ոչ հրացանի ճայթիւն, ոչ թնդանօթի գուիւն էր լսուում և ոչ էլ կայծակների որոտ ու շանթերի խորովը խօսում: Սակայն, ինչ էլ որ լինելու էր, կարծես գաղտնապահութեան և խորհրդաւորութեան մէջ էր կատարւում այստեղ, այն բարձր ու մաքուր և մարդկային գազանութիւնից աղատ աշխարհում:

Այսպէս, Գուգարքի խաղաղութիւնն էլ էր խանգարուել:

Քամին հետզետէ հերսոտուելով բռնալէ փչում էր, ձիւնը սրբում ձորերն էր թափում, դար ու փոս լցնում և տեղ-տեղ էլ գետինն անողորմաբար գոփում, ըերում ու վէրքերի նման բաց անում, — մարդու ջան սառսուեցնում, մոմուռ ձգում, ոտն ու ձեռքը տափից կտրում, ականջները կարմրացնում, պոօշները կապտացնում-կապոյտ լեղակ դարձնում ու մղկը-տոցը ասման հասցնում:

Սակայն, քամին սոսկալի ծաւալ և ոյժ էր ընդունել հեռում, բարձր սարերի վրայ, անտառների գլխին։ Այստեղ՝ անտառում և լեռների վրայ այլև ամպ չէր թողել միքանի ժամուայ ընթացքում. այնտեղ գոռում, ոռնում, անեղապէս վլուցում, շառաչում էր ամեն ինչ: Ճռճոցի, տրաքտրաքոցի անեղ ձայնէր էին լաւում ու ականջ խլացնում. այնտեղ՝ ցքինների ծանրութեան տակ և ամենի փոթորկի կրկնալիք հոսանքների առաջ ճօճում էր քոլը, և, մինը միւսի ետից հսկայ ծառերը ճղատում էին և ականջ խլացնող գըղթիւններով ու ճայթոցներով վայր թափուելով, խորտակում և անդունդները հասնելով, խշռւում, փշրւում էին անվերջ: Եւ, երբ մի ըսպէ դու շունչդ քեզ քաշած ականջ էիր դնում դէպի այն կողմը, դէպի բնութեան արհաւիրքները,

ինքդ քեզ միանգաւմայն մոռացած, հէնց իմանում էիր, թէ այն է ամբողջ աշխարհը տեղահան եղած՝ գլորւում է դէպի նեռն ու սանդարամեալ:

Ագան փոթորկիլը, որ զայրագին տակն ու վրա էր արել անտառն ու ծմակը, ոչինչ չէր խնայում. ահեղ ոռնոցով կոծում, հարուածում էր աջ ու ձախ—և բլրին, և բաշին և լեռան կրծքին, և, վիշտապի նման աներկիւդ, ամուր և ջիլ ու ամենի կաղնիներն անգամ, իրար վզով փաթաթելով, տակուահեղ, ճղնակոտոր անել էր սպառնում: Նոյն փոթորկին անարգել, ատա ևս աւելի զայրագին, ժժուն ու մրրկածուփ արագութեամբ անցնում էր Գագայ գաշտերի և հովիտների վրայով, որսնցից մէկի ականջում, ուր շատ թէ քիչ ձմրան արեկի նշոյլ էր ընկնում, որբի նման պատսպարուած կարծես, անհամարձակ դէպի սառցապատ ծմակն էր նայում Կէ. գիւղը, որի անբաղդ բնակիչն էր նաև մեր եղբայր Զատօն:

Այս գիւղի շրջակայքում ձիւնի աւազից նոյնպէս ամպեր էին գոյացել, որոնց ուժգին և պտտուն հոսանքները գաշտերի մէջ ծովի եռման ու ալէկոծութեան կերպարանք էին ստացել հակաշունչ սատանի քամիներից:

Բարկութիւն, իրաւ, բնութեան խորհրդաւոր բարկութիւն: Ամեն տեղ կարծես մահուան

գոյժ էր սփռւռմ, այնպէս որ, ահաբեկուած էր ամեն ինչ. այսինքն՝ և չնշաւոր, և անշունչ դարերը այն աշխարհի:

Գեղջուկները, գետնի խորթերը քաշուած մը չիւնների պէս, օգանելն էին քաշուել, այնպէս որ, կրակից էլ խիստ այրող ցրտի ու բուքի դաժան երեսից և սաստկութիւնից գիւղամիջերում էլ մարդ, անասուն և գաղան չէր երկում: Հպարտ, աղքատի, թոյլի և կամ ակոքի. կտրածին քերթող ու մարտակահար անող տանուտէրն անզամ քաշութիւն չունէր գուրսը երկար կանգնելու, չնայելով նոյնիսկ իւր գալլամորթ բրդոդ բուրքին, իսկ հէտ երէցն արդէն քիթ ու պոռնկը սառած, ցուրտ ու խոնաւ եկեղեցում ոտները բացրուքաշի անելով, իւր ալէլուն ու տէրողորմիան իրար վղով փաթաթելով, վերջացրել էր վաղուց և գողգողալէ ու ատամները զնդզնդացնելով տուն էր շատապել, ազատուել մի կերպ: Թռչունները սառել, փետացել, կամ թափուել էին ձիւնի մէջ և կամ հէնց թառ եղած տեղները սառել չորացել ու կտել էին ձիւղերի վրայից: Շները ծմրում, ոռնում էին տանջուելով դրսում: Բրդոտ ու մեծաքամակ արջն իսկ, խորը շան էր մաել լեռան սրտում և, իւղալից թաթը վաղուց ըսէխը դրել ու մոմոսցը կտրել այնտեղ. իսկ գալլը, հովաւին քնահարամ անող կատաղի թնամին, և գեղջուկի համար այս վտանգաւոր

և անյագ գաղանը, աշքերը չոտ թագնուած որջում, ամբողջ շաբաթ էր համարեա, որ անմեղ գառների արիւնով ժանիքները չէր առնոտել:

Հապա մարդկանցից ով էր խելագարուել և կամ զլիսցը ձեռք վերցրել, որ առանց շատ տաք հագնւատի, առանց ընկերի և յոյս ու հաւարի, այն հուր-հորոգմունքին և այն բքաշունչ դժընդակ ժամին, մեն-մենակ տանից չոլ դուրս կնար:

Բայց ի՞նչպէս չը հաւատայինք բաց աչքներիս, երբ պատուհանից ուշի ուշով գիտելուց յետոյ, ապշելով ու սաքսելով համոզուեցինք, թէ ամենակին ուրուական չէ մեր դէմ հանգիւման «չոլ դուրս եկողն», այլ մեր եղբայր Զատօն—մի դժբաղդ մարդ, մի հարստահարուած էակ և վերջապէս, մի մոռացուած ընկեր, որ միմիայն իւր մի պատոստուն, մէջքը հազիւծածկող քիւրքին ապաւինած՝ գիւղից դուրս էր եկել համարձակ և բաւական հեռուում-սառուցների և զամբերի վրայով, փոթորկի ու ձնաւագ հողմերի հետ կոիւսը տալով, գնում էր դէպի վար...

— Զոբանանց Զատօն ա..., անիբաւները համ իրան, համ երկուհոգիս կնկանը ծեծեցին, անարգեցին, եզր խլեցին տարան, համ էլ ջարմի տակ են գցել, հտլբաթ հարկան գեղերեցը փող

վերցնելու ա գնում,—գուշակեց բարեկամս,  
որի տանը հիւր էինք իջած ես ու ընկերս:

—Անշուշտ, եթէ այդպէս անողորմ չը լի-  
նէր տեղի ունեցած ոճիրն ու անարգանքը, թրշ-  
ռառ մարդն այս սոսկալի սառնամանքին փո-  
թորիկների մէջ չէր ընկնիլ երբէք:

—Այն, կարիքը մարդուն ինչ ասես, անել  
կը տայ. խեղճ մարդ, տեսէք տեղը որքան է  
դժուարացել, որ մոռացել է և խրճիթ, և կին և  
զաւակ և մինչև իսկ իր անձն անդամ:

Եւ, մինչդեռ մենք զարհուրանքնի նայելով  
դէպի ձիւնի աւազով ամպամած և հողմակոծ  
դաշար, ափշում, բացականչում էինք այդպէս  
ու կարեկցում նրան, յանկարծ մի աւելի սրտա-  
ճմլիկ տեսարան ևս բացուեց մեր առաջ,—յան-  
կարծ մի յուսահատական, մի պղեկտուր ճիչ աղ-  
մկեց մեր սիրար, ցնցեց մեր հոգին և պաղե-  
ցրեց մեր արիւնը:

Չատօն, որ մի վաշխառուից հալածուած  
միւսի մօտ էր վազում, իւր կրած հարուածնե-  
րից, իւր ցաւի դառնութիւնից մոռացել էր կնոջը  
յայտնելու իւր չոլ դուրս գնալու նպատակն այն  
չար ու դաժան ժամին. ուստի կինը երկար կան-  
չելով ետևից և պատասխան չստանալով, կարծել  
էր, թէ նա ցնորուել է, մանուկն օդայումն ան-  
տեր թողած, ոտաքորիկ, մազերն արձակած և  
հազի ձորձերը պատուուելով, «հայ, հարայ, բըռ-

նեցէք, գնաց, կորաւ, բռնլցէք» աղաղակելով  
վազում էր յետկից, որ բռնի, խլի, ազատի նրան  
անողորմ հողմերի ձեռքից, որոնք նոյնպէս տան-  
ջում էին մերկ աղքատին, բայց հասնել չէր կա-  
րողանում, մանաւանդ որ, յղի էր անբաղդը:  
Հողմերը հրեղէն էին դարձել կարծես, իսկ Զա-  
տօն հալածական: Նա իւր բաղդի անիւր հեծած  
գնաց, սառցաշունչ հողմերի ու ամպերի մէջ  
կորաւ, անյայտացաւ ահաբեկուած կնոջ աչքե-  
րից: Կենդանի յետ կը դառնար արդեօք, թէ մի  
աեղ, մի որևէ փոսում ձիւնի ու զամբերի տակ  
սառած ու մեռած կը դանէին, դա անորոշ էր  
մեզ համար: Իով եղկելի կինը յսւսահատ և շըն-  
չասպառ յետ դարձաւ հազիւ, և, բռնով ձիւնը զլ-  
խին տալով, մի կերպ հասաւ իւր ցուրտ ու խո-  
նաւ, իւր բորանահար ու դժբաղդ օդան, ուր ան-  
տէր թողնուած երեխան արդէն ճաքում էր լա-  
ցից ու վախից:

## Ե.

Նարգիզն օդան մանելուց յետոյ էլ դուրս  
չեկաւ այնտեղից: Երեք թէ չորս ժամ չանցած  
օդայի դռանը մի քանի նոյնպիսի խեղճ կանայք  
երեացին: Նրանք շտապ շտապ դուրս ու ներս  
էին անում. մինը մօտակայ մարագից մի կոնակ  
ծղնօտ կամ խոտ ներս տարաւ, երկրորդը մի  
գիրկ խշուր-վշուր կրակի համար, իսկ երրորդը  
մի սափոր ջուր: Նարգիզը հիւանդացել էր. ըստ

Երկոյթին նրա երկունքը բռնել էր, ուստի տառմէր պառաւը ծննդեան համար պատրաստութիւն էր տեսնում: Թշուառ նարգիզն այն քրիստոսամուր խոտի կամ ծղնօտի վրայ պիտի ծընէր իր մանուկը: Ծղնօտն իբրև անկողին, ձրգեցին խոնաւ պատի տակ, և բերին չոքացրին նրան ու մի պատուտուն փալաս էլ ծածկեցին վրան: Նրա ճիչը երկունքի սաստկութիւնից երկինք էր համառում: ամբողջ գիշերը տանջուեց նարգիզը, և, չնայելով ցաւի հետ նրա Աստուծուն ուղղած պաղատանքներին, սուրբ աստուածածնին արած աղօթքներին, չէր ազատւում: շատ դժուարացել էր թէ նրա և թէ տառմօրը դրութիւնը. ճշմարիտ է, վերջինս, իբրև կարեկից հարկան, անկեղծութեամբ աշխատում էր օգնել թշուառին, բայց իսկապէս իւր անմեղ տղիտութիւնով և կոպիտ ու վայրենի գործողութիւններով նրան արդէն մահուան դուռն էր հացնում:

—Ո՞վ Աստւած, ո՞վ Մարիամ աստուծածին, օգնեցէք ինձ, օգնեցէք...—ահաւորուած ու շըփութուած պաղատում էր տեղը նեղ ու յուսահատ գեղջկուհին:

—Զարմանք: Էստեղ մի հիլաթ կայ, վաթսուն տարեկան կնիկ եմ ու էսպէս դժարածին ծընընդկան չեմ տեսել,—զարմացմամբ և յուսահատուած նկատում էր տատմէրը:

Տարօրինակ երկունք: Տարօրինակ և կանկածելի էր թւում նաև պառաւին. նա արդէն յոգնել և ունեցած բոլոր հնարագիտութիւններն սպառել էր, ուստի, թէև ուշ, բայց և այնպէս հարցրեց նարգիզն:

—Նարգիզ, որդի, դրուստն ասա, հաշիւդ զիտմաս, վագէդ ամ (ժամանակդ է), թէ օրապակաս ա:

Պառաւի հարցին իբրև պատասխան, երկումատը ցոյց տուեց, որովհետեւ չխօսքան էր նրանից, այսինքն՝ ին և անմիտ աւանդութեան համաձայն, ամաշում էր նրա, իբրև հասակաւորի հետ, Ասծու տուած լեզուովը խօսել:

—Վճ. Երկու ամիս էլ կայ. քու խէրդ ու ձարդ շատ ըլի, աղջի. որ էգպէս էր, բա ինչու չէիր վախտին ասում, որ դալլաք բերել տանք:

—Օ՛..., կմեռնեմ, դալլաք. վանյ...

—Որ վայ ես անում այ խեղճ ու անճար, մին ա լաւ, անաջալ մեռնիլը<sup>o</sup>, թէ դալլաք կանչելը: Թող կանչենք, որդի, թող կանչենք, նաքեզ կ'ազատի, ուստա մարդ ա...

—Օ՛..., վանիում եմ...

—Դէ որ դալլաքից վախենում ես, թող չուրան կանչենք:

—Վճյ. Կը մեռնեմ. դիմանալ չեմ, —դողդողալով ճշում, սարսափում էր նա թէ մէկից և թէ միւսից և այս բոլորը չխօսքանը յայտնում

էր մի հասակաւոր մի այրիի—իբրև թարգմանի բերանով։

Իրաւ, սոսկալի բան։ առաջինն իւր դանակով ու ածէլիով, իսկ երկրորդն իւր աւելի կոպիտ ու վայրենի միջոցներով քանի քանիսին զոհ էին տուել զիւղում, ուր ոչ բժշկի հետք էր երեսում և ոչ էլ մանկաբարձուի, որոնք գեղջուզին ու գեղջկուհուն մոռացած մեր օրերում, իրանց գեռ ազատ քաղաքացիներ են համարում և ոամկական կեանքը տատմէրներին, դալլաքներին ու անասուններ ծնեցնող չորաններին թողնում։

Ի՞նչ անէր, որ չը սարսափէր խեղճ Նարգիզը—մեր մոռացուած աշխարհում մոռացուած քոյրիկը։ Նրա բաղդակիցներից ու ընկերուհիներից շատերը, նոյն իսկ իւր աչքի առաջ, նոյն դալլաքների ու չորանների ձեռքով մէկը միւսի ետևից գերեզմանիջնելով, իրանց թշուառ ծնունդներին էլ որբ ու անտէր, անմայր էին թողել՝ իբրև աղքատութեան ժառանգներ։

Բայց պառաւն անկեղծ էր։ նա շարունակ համոզում և մինչև իսկ յանդիմանում էր վախկոտ ու անսիրտ ծննդկանին։

—Աղջի՛, նամուս, ղէյրաթ ունեցիր, ամօթա, ինչու ա սիրադ ճաքում դալլաքից, թող կանչենք, վախիլ մի՛...։

Եւ, մինչեռ կկանչէին բժշկապետ «Հ-Պ

քանին», թշուառ ծննդականը նոր չարիքի կրկնակի երկիւղի աղդեցութեան տակ, ոյժ տուեցուժին և վիժեց երեխան այն կոշտ ու փշոտ ծզնօտի վրան։

—Խեղճ ու նաչար և աբաղդ Զատոյի աչքը լոյս։—դժկամակութեամբ և ցաւակցաբար հոգւոց հանելով, ասաց պառաւն, փաթաթեց նորածին աղջկան և սկսեց ծածկել ու պատսպարել անբաղդ նարգիզին, որ հազիւ ուշքի եկած նուաղած տեղից, սկսել, էր սաստիկ դողացնել ցըրտից, մանաւանդ որ խիստ քրտնած էր առաջուց։ Բայց ինչով պատսպարէր, անկողին, տեղաշոր կար դատարկ օդայում։ Աստուած անկողին համարէր այն հին քեչան, որ գցեց տակը և այն պատուատուն կարպետը, որ գցեց վրան՝ վերմակի փոխարէն։ Նարգիզը չոր ու լանթ կարպետի տակ այնպէս էր դողդողում ու վրվթացնում, որ եղածն էլ վրայիցն ուզում էր փախչել կարծես։ Պառաւն օջաղը վառել տուեց իւր օգնական հարեաններին, որքան կարող էր, տաքացնել տուաւ օդան։ Օդան տաքացաւ, հիւանդը հանդարտուեց և մի առ ժամանակ խիստ կարօտով քնեց, հանգստացաւ այնքան յոգնածութիւնից, իսկ հիւանդապահ կանայք խղճալով նրան և քունը շխանգարելու համար ցածր ձայնով սկսեցին զրոյց անել տիսուր դէպքերի մասին։  
—Խեղճ Զատօ, բաջը խի՛ շատ աջ էր, կնիկն

էլ աղջիկ ծնեց. գոնէ տղայ լինէր, «ը ուրախանային, առանց էն էլ՝ սպոր են եզան համար» — է՞ն, ուրախանան, չուրախանան, կարկուտըս սրա գլուխը տանի, ապրելու հօ չի, օրապակաս զադ ա, — անմեղ մանկան երեսը բանալով, նկատում էր տատը:

— Աստւած պակսացնի նրա պէս պարտատիրոջ օրն ու կեանքը, հալբաթ խեղճ կնկայ մէջըին են ծեփել որ սհէ անժամանակ շպրտեց երեխան:

— Դուք կնկանը ծեփելն էք ասում, բա մարդուն: Օ՛, ես տեսայ, ամա իմ արնկեր դիւշմանն էլ (իմ թշնամին էլ) ոչ տենայ. խեղճ Զատոյի ջանումն էլ սաղ տեղ չթողին, չիմ ջարդեցին:

— Բա հիմի ուր ա, որտեղ ա գնացել էս բուք ու բօրանին:

— Գնացել ա, որ մօտիկ գեղերիցը մէկից պարտք վեցնի ու բերի եզն ազատի:

— Հա: Ի՞ էրնակ նրա հաւատին. որ բերի, թուխինի անհոգի ջնուդը նրան եզն ա յետ տալու. էնա տարաւ ինչ տարաւ. մենակ սրանն ա տարել. ումը խղճաց, ումը յետ տուեց, որ սրանը յետ տայ...

Ը.

Աքաղաղներն արդէն վաղուց կանչել էին և օդայի երդիկից դուրսը լուսապէծին էր տալիս. գիւղի ներքի ձորում շները վրա էին թափուել

մի մարդու, որը ձեռքի գաւազանով հազիւ թէ կարողանում էր իրեն ազատել կատաղի գազաններից: Շներն իրենց սահմանից հալածելով նրան, յետ դարձան: Եկողը դժբաղդ Զատօն էր: Նա իւր սիրելի Խնձոր եղբօլն ազատելու համար երկի շատ փողատէրերի դուռն էր բաղիւել, աղաչել, պաղատել, բայց բոլորիցն էլ մերժուել էր: Ժողովրդի իմաստուն առածի համաձայն «շունը շան ոտը կոխել չէր», այսինքն՝ նրանք, այն քարասիրտները, չէին ուզեցել իրենց նմանի խաթրին դիպչել «մի Զատոյի համար» և խեղճ աղքատի ձեռը ծոցումն էին թողել: Նա զալիս էր խիստ յուսահատ, զլուխը կախ, ջարդուած ու փշուած քայլերով, սառած ու կապտած շրթունքներով, բերանի գոլորշին բեղերի ու յօնքերի վրայ ցըթոացած և լեզուն կապ: Եւ, երբ այդ դրութեան մէջ եկաւ, ներս մտաւ օդան, տեսաւ հաւաքը ու կանացն ու ամուսնուն պառկած, աւելի ահաբեկուեց, աւելի շփոթուեց նա և շատ աշխատեց, որ խօսայ, հարցնի բանի էութիւնը, բայց չկարողացաւ: Նա համրի նման անորոշ ձայնով միայն կարողանում էր «ան» անել և կղուարած ձեռներով ցոյց տալ, միքանի նշաններ, որոնցից հասկացւում էր, թէ կնոջ առողջութեան մասին է հարց ու փորձ լինում, իսկ վերջինս արթնանալով և նայելով նրա անյոյս դրութեանը, անվերջ յուզմունքով և ամե-

նասրտաշարժ հեկեկանքներով լաց էր լինում  
իւր արիւնոտ անկողնում:

—Ա՛ ա, ա ախ», —նորից ու նորից զլուա-  
ցնում էր սառած Զատօն և անորոշ շշունջներով  
խնդրում կարծես, որ կինը լաց չկինի:

—Աղջի, այ որդի, մեղք ա մարդկ. սիրադ  
պահի, թող որ տաքանայ, մի քիչ հանգստանայ,  
բարի լեզուն բացուի, —ինդրում, յորդորում  
էին բարի կանայքը:

Նարդիզը հազիւ զսպեց իրեն, որով նա էլ  
խաղաղուեց փոքր ինչ, բայց ուզում էր թէ  
ամբողջապէս կրակն ընկնի, այնպէս մրսում էր  
ու վրվթացնում, ատամներն իրար խփում:

—Սաթալջամ ա էս մարդն (թոքերի բոր-  
բռումն ունի), ինչ անենք. ի՞նչ գցենք տակը,  
ի՞նչ վրան, —օդայի դատարկ քիւնջ ու պուճա-  
խին նայելով և ձեռքներն իրար կցելով, կա-  
նայք հարցնում էին միմիանց:

Ի՞նչ անէին խեղճ այրիներն, իրանը էլ  
միեռյն դրութեան մէջ էին —մի մի ձերք լանթ  
ու փթուր անկողին ունէին, որոնց մէջ հազիւ  
իրանց որբերին էին փաթաթել: Վերջապէս մէ-  
կը յիշեց, որ իւր օդայում մի աւելորդ կարպե-  
տի կտոր կայ, միւսն էլ վազեց բերեց մի չուալ-  
չուալը տակը, կարպետի ձորձն էլ վրան  
ձգեցին և Զատոյին օջաղի առաջ, կրակից մօտ  
պառկեցըին:

Կէս ժամից յետոյ, սոսկալի էր Զատոյի  
դրութիւնը. տաքութիւնն անչափ էր. նա ան-  
դուր պղնձի պէս այրում էր ու շնչում ամ-  
ջող կրծքով, անհանգիստ լինում սաստիկ և  
անդադար վրայի կարպետի կտորը դէն շպրտում  
անդադար վրայի կարպետի կտորը դէն շպրտում  
ու տնքում, վոչում, ախ-օխ քաշում, մարդու  
երեսի պէլ-պէլ նայում և ապա աչքերը խփում  
ու մռնչում. երբեմն էլ՝ բազուկներն աջ ու ձախ  
յետ տանում և վրաբերելով կրծքին դարկում.  
և, երբեմն էլ՝ վեր թռչելով, աչքերն օճօրքին  
յառում, յարձակում գործում դէպի վեր, դէպի  
վար և նորից, հրէշ տեսածի պէս, ահում ու  
զարդանդով յետ նահանջում և սկսում յետոյ էլ  
հանգստութեան մէջ զառանցում իւր պարտքի,  
եզան և պարտատիրոջ մասին միմիայն:

—Շատ թիւնդ սաթալջամ ա, ամա՞ ինչպէս  
երկում ա, լեզուն կբացուի, չիւնքի համ դեխ  
ա տալիս, համ էլ բրանում:

—Հա, սաթալջամի գեղ ու դարմանը բըր-  
տինքն ա, թէոր լաւ քըրտնի, յոյս կայ որ կապ-  
րի, —յուսագրում էր տատմէր պառաւը:

Այս օրհնուած և զթառատ կինը գլխից վեր-  
ցըել էր իւր միակ ծածկոցը հիւանդի զլուխը  
կապել և երկու հիւանդների մէջ կարծես թէ  
կապել հրեշտակ դարձել —կամ մէկին էր ծած-  
քարի հրեշտակ դարձել —կամ մէկին էր ծած-  
քարի կամ միւսին: Պառաւի անձնազոհ ջան-  
կում, կամ միւսին:

ջապէս այնպէս հեղեղուեց քրտնքի մէջ, ոլ կարծես թէ ոսկըներիցն էլ քրտինք դուրս տուեց. միայն, ցաւն այն էր, որ եղկելին հագի շապիկ համարուող պատառուուն փալասից աւելին չունէր, որ փոխնորդ անէր, ուստի զժասիրտ պառաւն ստիպուած եղաւ հանել իւր հագի միթանէն և հազցնել նրան, մինչեւր նրա լանթը կը հանէր և մզելով ու կրակի վրայ չորացնելով, կհազցնէր նորից: Պառաւի շնորհիւ և ազատարար քրտնքի միջոցով, Զատոյի բաղդի անիւը մի անգամ էլ շարժուեց և նրան ու իւր Նարգղին ազատեց մահից: Խորհրդաւոր էր այս շարժումն անշուշտ, որովհետև չէր իմացւում, թէ բնութիւնն ումը խղճաց աւելի. արդեօք երկու վըշտատար լծակիցներին, թէ երկու անմեղ մանուկներին, որոնցից մինն իւր խանձարուրով մարդու հոգուն ու մտքին մինչև Բեթղեհէմի մըսուրներն էր առաջնորդում: Կէս օրին արդէն Զատօն համ աչքը բացեց համ լեզուն և երախտագիտութեամբ լցուած առաջին անգամ այս սրտառուչ խօսքերն արտասանեց, պառաւին դիմելով:

— Նանի ջան, բեր ձեռքերդ համբուրեմ մօրս ձեռքերի պէս, դու ինձ ազատեցիր մահից...

— Փառք Ասծու. լիզուդ որ բացուեց, էլ դարդ չունես, Աստած խղճաց ձեզ, — գոչեց պառաւը: — Հի. ասում ես դարդ չունի՞մ. հապա Խըն-

ձորս, նանի ջան, որ ձեռիցս գնաց: Ա՛խ, — հառաչեց ու լոեց նա, իսկ արցունքներն սկսեցին մէկ մէկ գլորուել դէպի ցած:

— Ա՛խ... ախ.., — լսւում էր նաև կնոջ անկողնից, իսկ պառաւն ողորմած, շարուրակում էր մեղմել ու ցրել նրանց հոգեկան վշտերն ևս:

— Յուսահատուիլ միք, որդիք, Աստօծ մեծաւ:

— Ուրա ա, որ մեծ ա, սառած ու փետացած գնացի, որ զեղերիցը միքանի թիւման փող ճարեմ, բերեմ եղս, ախ, աղպէրս ազատեմ, հաբաինչն փողատէրերի սիրտը թրահմը չգցեց, ինչնու քամակները շուռ տալ տուեց վրէս ու ինձ էս օրին ու էս հալին հասցըեց, — լսութեան գըրկից նորից բողոքեց Զատօն:

— Ասծու դէմ ճճգոհալը լաւ բան չի, որդի. գիտեմ, նեղացած ես, համա էլի հաւատա, էլի յուսա ու կտեսնես, որ նրա ողորմութիւնը կը հասնի ձեզ. առողջացէք, վերկացէք տեղներիցդ, մատադ ձրագ, պատարագ արէք, բալքի մի մեղք ունէք, խրասում էր պառաւը և իւր հաւատով և յուսով լցնում հիւանդների սիրտը:

— Լաւ ես ասում, նանի ջան. էն ա շուտով ջրօրհնէք ա լինելու. դէ թող Աստուած աշոթքդ լսի, սաղ սալամաթ վեր կենանք ու քու ասածն անենք. բալքի զօրթ մեր մեղքի համար ենք սհենց տանջւնում. կարծես զղջալով պատաս-

խանեցին նրանք և խոստացան լսել պառաւի  
խորհրդին:

թ.

Տին-դօ, տին-դօ տին-դօ...

Սա գիւղական զանգակի առաջին հրաւէրն  
էր այն ցուրտ ու բուքին: Այս հրաւէրը կարծես  
ուզում էր յուսագրել, միսիթարել նրանց և կամ  
մի առժամանակ խարուսիկ հմայքով մոռացնել  
տալ նրանց սրտերում ամբարուած, ծովացած  
այնքան դարդերն ու ցաւերը, այնքան ոև ու  
սախտ օրերը:

Անուսում գեղջուկը պիտի մասնակցէր՝ այս  
մեծ հանդիսին, թէ տօնի իսկական ոգին և  
նշանակութիւնն ըմբռնելով, այլ բնազդմամբ,  
հաւատքով և կամ պապական սովորական, աւան-  
դական կարգով:

Մարդու ոտքն ու ձեռը տափից կարող ցուր-  
տըն ու բուքը, կենսական այնքան խեղճութիւնն  
ու պակասութիւնները սակայն, չէին կարողա-  
նում արգելք լինել հաւատաւոր գեղջուկների  
«ժամ» գնալուն, քանի որ նրանք այնպէս էին  
հաւատացած ու համոզուած, թէ ջրօրհնէքի կամ  
Քրիստոսի մկրտութեան շնորհիւ, գոնէ միւս  
տարուանից բացուելու են իրանց բաղդի գոները,  
քանի որ գեղջուկն այնպէս էր մտածում ու  
հասկանում, որ եթէ օրհնուած ջրից միքանի  
կաթիլ տանի իւր դաշտի ու տաշտի—հոնդ ու

արօտի վրայ սրսհկի, Աստուծու ինամքը կը-  
հասնի, առատութիւն կտայ և իւր դատարկուած  
մարագը դարմանով, չարդախը խոտով և կամ  
հորերն ու ամբարները ցորենով կլցուին: Այս  
յոյսերն ու ակնկալութիւններն էին ուհա այն  
դաժան ժամին գուրս քաշում ամեն մի տանից,  
ամեն մի խրճթից, ամեն չափ ու հասակի գեղ-  
ջուկներին, որ, չնայելով քըքրուած, խախալ  
դարձած և հաղար ու մի լանթ ու փթուրով կար-  
կատած հագուստներին, այնուամենայնիւ, զան-  
գակի ձայնը լաելուն պէս, իսկոյն խաչակնքում  
էին երեսներին և շարան—սառուցների  
վրայով ուղղուում էին դէպի եկեղեցի, ուր յոյսով  
ու հաւատով պիտի կերակրուէին, ինչպէս իրենց  
պապն ու տատը....

Եւ այսպէս, նրանցից իւրաքանչիւրը՝ թէ  
ծեր, թէ պառաւ, թէ հարուստ և թէ աղքատ,  
մի մի ճուիկ ձեռներին, բուք ու բօրանի բե-  
րանն ընկած, գնում էին մուրազներն առնելու  
«մուրազ երթան սուրբ կարապետից»

—Տին-դօ, տին-դօ տին-դօ...

Եւ գեռ մեղմ ու խորհրդաւոր ձայնով հըն-  
չւում, շարունակում էր զանգը, որի եռանդուն  
ժամնարը գիւղի քաղցած ու խունացած տէր-  
տէրներից մինն էր, որ մեծ ագահութեամբ եր-  
կար ժամանակ սպասելով տօնին գալիք գանձա-  
նակի միքանի կոպէկներին, շաղախուած մորու-

սը տմբամբացնելով, շրթունքներին հուպտուած խփում էր ու խփում զանգը, ապա թէ՝ ճպճպան աչքերովն էլ ժամաւորների քայլերը համարում: Թւում էր, թէ որքան զանգի ձայնը խորհրդաւոր ու հաւատաւորող էր գեղջուկների համար, նոյնքան էլ հասկանալի, ախորժելի և բնորոշ էր «երէցի» համար զանգակի տինդօները կարծես մէկիկ մէկիկ թուելիս լինէին տէր հօր իղձերը թէ՝ «այ ժամտորները» ունէք թէ չունէք, այդ ես չգիտեմ, միայն թէ ժամոցս, աջահամբուրս ու խաչանէքս բերէք տուէք, էլ ուրիշ ոնչինչ... ինչեցէ, ժողովուրդը ժամ էր հաւաքւում և մեր երէցը խիստ ուրախ տրամադրութեան մէջ էր, որովհետեւ այդ երջանիկ օրը նրա փորը հացոտ ու իւղոտ պիտի անէր:

Ժամ շոապողներից մինն էլ անյաջողութիւնների և անբաղդութիւնների ձեռքին խաղալիք գարձած մեր եղբայր Զատօն էր. սա իւր և իւր երախտաւոր ազատարար պառաւի հաւատովն ու կարծիքովը կարծես թէ արդէն գտել էր իւր ծոռւած բաղդի բանալին, ուստի մտածում էր ու ասում ինքն իրեն:

—Եթէ մի անգամ էլ ես Քըիստսին քաւոր կաղնեմ ու նրա սուրբ խաչը ջրիցը հանեմ, կապուած բաղդս անպատճառ բաց կլինի:

Եւ այս հաւատով Զատօն ջրօրնքէի օրը, իւր խորհրդակից նարգղի հետ միասին, մի ա-

ռանձին թեթևութիւն զգալով իւր դարդերին, տարօրինակ հոգացողութեան ու պատրաստութեան մէջ էր ձգել թէ իրան և թէ նրան:

Առաջին զանգահարութեան միջոցին, նաև կացինը ձեռքին, յարձակուած դուրսն ընկած կորը հաստ մի կոճղի վրայ, որքան ոյժ ունէր, փորը հաստ մի կոճղի վրայ, որքան ոյժ ունէր, շտապշտապ հարուածելով նրան, կրակի համար ձլանգներ էր ձեղբոտում նրանից, իսկ կինը, չնայելով վրայի ցնցոտիներին, բաց մսին ու անիլաւ ցրտին, մարդու ձեղքոտած փայտերը ձիւնի միջից ժողովելով զիրկը, ներս էր կըում ու օջաղի կրակը վառում, թեժացնում, ինչպէս այդ երեսում էր նրանց ծխնելոյզից բլիլալէ դուրս ելնող ծխից, որն այդ օրն ամենակին աղդատ Զատօյի ծխին չէր նմանում. Թւում էր թէ Զատօն ու կինն այդ օրը մի յանդուկն քայլ են արել. և իմացուեց, որ նրանք, չնայելով իւրենց արդէն ունեցած պարտքերին, որ ամեն վայրկեան հրէշի պէս կրծում էր նրանց սիրտն ու հողին, վճռել են մի ուրախութիւն անել իւրենց տխուր, դատարկ ու պատուահաս յարկի ընց տխուր, դատարկ ու պատուահաս յարկի տակ: Նրանք կարծես թէ մոռացել էլ էին Խնձորին, որ դեռ էլի բառանչում էր ու վայ տէր կանչում... այն ժամին:

Երկրորդ զանգահարութեան միջոցին Զատօն անհամբեր կացինը խփեց, կոճղի մէջ պինդ տնկեց, վերջին ձլանգներն էլ ինքը զիրկն առ-

«նելով, արագութեամբ մտաւ տուն—իւր օդան և հագի պատռոտուն կարճ քուրքի վրայից հագնելով նաև կարկատած չուխան, որպէս «ազիզ օրուայ հագուստ», դուրս եկաւ շէմքից և քայլերն ուղղելով դէպի եկեղեցին, յետ նայեց նորից ու կնոջը «հալհալ արեց», այսինքն հաստատ պահ տուեց, որ պատրաստ կենայ...

—Նարգիզ ջան, ես էսա գնում եմ, ամադու աչքերդ խուփ չանես. մինը տանը, մինն էլ ժամի ճամփին պահես ու իմանաս, որ հազարից մի անգամ մեր տունն էրեց, տիրացու ու մարդիկ են մտնելու...

—Գնա, գնա. արխէին գնա, ոնցոր ասում ես, էնպէս էլ կանեմ:

—Նարգիզ, ողորմի հօրդ, չայն ու կերակուրը չսառցնես, կրկին ու կրկին պատուիրեց Զատօն և յոյս ու հաւատը հայոց մեռօնի, պէս երեսիցը կաթկաթելէն դէպի «ժամ» գնաց, որ իբր թէ տէրտէրներից սփոփանք, մխիթարանք և քաջալերութիւն գտնի...

—Յառաջ բարի, ուր, Զատօ աղբեր. ժամ, թէ ուր, —պատահելով նրան, հարցրեց նոյնպէս «ժամ» գնացող հարեւաններից մինը:

—Ժամ, հրաման քեզ. եա բաղդ, աեսնենք. Էսօր խաչը ջրիցը ես պիտի հանեմ,

—Դմւ:

—Հրաման քեզ:

—Զեն թողնիլ:  
—Ո՞վ չի թողնիլ. տէրտէրների ձեռքին չի.

նրանք ինձ խօսք են տուել:

—Դրուստ ա, տէրտէրների ձեռքին ա, համա պէտք ա խմանաս, որ տէրտէրի հոգին էլ հարուստների ձեռքին ա:

—Զէ, ես պիտի հանեմ, ես խաչը ջրից հանելու համար պարտքի տակ եմ ընկել:

—Աստուած անի, որ դու հանես, միայն թէ զուր ես պարտք արել պարտքով հանած խաչը զօրութիւն չի ունենալ: Ո՞ւմնից ես պարտք արել:

—Խեանց Խօջիցը:

—Օհօ, խև՛ ու Խօջա, ինչ լաւ են իրար գտել. ամա անիրաւը բօլ շահ առած կլնի քեզանից:

—Զէ, էլի սա խափով (խղճմտանքով) ժաժ եկաւ, շահը շատ չգրեց:

—Ինչքան վերցրիր ու ինչքան գրեց:

—Իրեք մանէթ վերցրի. հինգ ամիս ժամանակ գրեց. ամառս երկու օր հունձ պտի անեմ, ժամանակը լրանալու օրն էլ, շահը հետը, հինգ մանէթ փող պիտի ետ տամ, երկու էլ լաւ որց կաձսւտ:

—Պահ. քու տունը չքանուի, ա Զատօ. Էսա կարճ ասա մանէթին երկու մանէթ շահ ա գըրել, էլի:

—Ե՞ն, հաբա մնց անէի, ճարւում չէր:

—Ճարտում չէր, հանիլ չէիր, զուր ինչու  
էիր պարտքակոխ լինում:

—Այ տղայ, շշկուած մարդին էլ կասեն  
թէ խի ես տհէ արել, դէնա արել եմ, էլի:

—Լաւ. ասենք թէ արել ես ու անպատճառ  
ուզում ես խաչը ջրիցը հանել, եանի քիչ պարտք  
կանէիր, էլի:

—Քչով բանը դըրստւում էր, մի մանէթի  
չայ ու շաքար, դէս դէն եմ առել, երկուսն էլ  
էս ա, որ խաչհանէքի եմ տանում:

—Երկուսն ի՞նչ խաբար ա, տաս շահին  
հերիք չէր:

—Էրիցին առաջուց միւննաթ արի:

—Ետոյ:

—Չելաւ:

—Ի՞նչ ասեց որ:

—Ասեց «հազարէց միհետ զատիկ», էն էլ  
նաւակատիկ»:

—Է՞հ, գնւ գիտես...., գժկամակութեամբ  
ասաց նրա խօսակիցը, որ փոքր ի՞նչ կարգացած  
մարդ էր, և սորանով էլ ընդհատուեց նրանց  
խօսակցութիւնը, որովհետեւ արդէն մօտեցել էին  
եկեղեցու շէմքին, ուր վեր առնելով գլխարկ-  
ները, երկիւղածութեամբ մերձենալով դրանը,  
միքանի ջերմ համբոյրներ դրօշմելով որմերին,  
ներս մտան մրմնջալով:

Արդարն, խեղճ նարդիդն «աչքի մինը հա-

զար էր շինել»—նա անհանգիստ եղած ու ան-  
դադար դուս ու տուն էր անում. այսինքն՝ բո-  
բիկ ոտքերով մի առժամանակ ձիւնի մէջ կան-  
գնում, նայում, ծկրակում էր «ժամի» ճամբին,  
դողդողում, սառուսուռ զգում: սրսրթալէ ներս  
գնում, ոտքերը տաքացնում կրակի վրայ, նորից  
դուրս գալիս և այսպէս անվերջ շարունակում  
լի հաւատով սպասելով, թէ այնէ որտեղ ո՞ր է,  
Զատօն մեռօնաթաթախ խաչը ձեռին «Էրէցնե-  
րին ու տիրացուներին» բերելու է, որ իրանց  
բաղդի չար ողիներին տանից քշեն, հալածեն...

Բայց, որքան եղաւ գեղջկուհու զարմանքը,  
ինչպէս փշրուեց նրա յոյսը, երբ, երկու ժա-  
մուայ չափ դուրս ու ներս անելուց յետոյ, տե-  
սաւ, որ Զատօն գալիս է ձեռնունայն, առանց  
խաչի, առանց տէրտէրի ու խալիփի, և վերջա-  
պէս, առանց յոյս ու հաւատի, շփոթուած ու  
վրդովուած, անիծելով և հայնոյելով:

—Ա՞ի: Երանի թէ թուրք լինէի, երանի  
թէ ջնուդ ու նասրանի ծնուէի..., —աղաղակում  
էր Զատօն և սառուցները կոխ տալով գալիս  
էր դէպի վեր այնպէս արագ, որ կանգնեցնել  
անկարելի էր, այնպէս հերսոտած, որ հետը խօ-  
սել չէր լինում. նա բարեպաշտութիւնը մի կողմը  
թողած, ինքնամոռացման մէջ ընկած, այնպիսի  
անէծքներ ու հայհոյանքներ էր հնարում, որ

թերես իւր կեանքումը լսած էլ չէր նոյն իսկ ամենափուչ և վայրենի մարդուց...

—Չէ, չէ. ես թուրք եմ գառնալու, ես այսուհետեւ էլ Ասծուն հաւատալու չեմ. էլ ասելու չեմ թէ եա Քրիստոս կայ, եա պատարագ, եա մեռօն, եա խաչ, եա թէ չէ հոգի ու հաւատ. որտեղ նստեմ, ասելու եմ՝ չիմ սպաւ են: Սըհէ բան կլի. դրանք էրէցնի են, դրանք Քրիստոսի փոխանորդ են, հէ. չէ, չէ, ոչ հաւատում, ոչ. դրանք դժոխքի սատանաներ են, դրանք աշքակապներ են, դրանք հարուստների զնու են, դըրանք, դրանք..., —կարկտի պէս վրա էր տալիս նա և հետզհետէ կրակի պէս վառւում, բորբոքւում:

—Ա՛ Զատ, ա՛ Զատ... Խչատուր, էհէ Խըշատուր, ադա մանըմ չես...

Աջ ու ձախից ձայն էին տալիս նրա յետեից, որ մի բան իմանան, մի բան հասկանան անակնկալ դէպքից, բայց ումնից: Զատօն այնպէս էր կրակուել, այնպէս վիրաւորուել, որ նոյն իսկ եթէ ամպ էլ տրաքէր նրա ականջին, էլի չէր լսիլ բոլորովին: Նա հայհոյանքի պաշարը դեռ չսպառած վերջապէս ծածկուեց իւր օդայի սրահի տակ և կարծում էր, թէ դրանով էլ պիտի վերջանար կօմեղիան: Բայց ահա նա մի պղինձ դուրս բերելով այնտեղից և հարեանի շներին ձայն տալով շվոցով, միջի կերակուրը

շուռ տուեց նրանց առաջ, պղինձը մի կողմը գլորեց, ներս մտաւ նորից, մի չայդան և երկու շիշ էլ դուրս բերեց, իրրացով տուեց, խփեց, փշրեց, գինին ու արագն էլ դեն ածեց. և, դրանով միայն կարծես էրուած սիրտը հովացնելով, ներս մտաւ ու էլ դուրս չեկաւ:

Շները վրա թափուած լափում ու լզում էին թափուած կերակուրը, իսկ հանդիսատես գիւղացիները անվերջ ծիծաղում էին այդ արարմունքի վրայ:

Զանգի ու երգի ձայնն արդէն գակարել էր եկեղեցում և բոլոր ժամաւորները ճուիկները օրհնած ջրով լցրած, դուրս գալով այնտեղից, մէկ մէկ ցրւում էին գիւղամիջերում: Դուրս էին եկել քահանաներն ու տիրացուներն են, և մի լիքը լիքը մարդու հետ շարժուել դէպի մի եւրոպականացրած շինութիւն, որ կառուցուած էր մի ընդարձակ այգու մէջ և որը գտնուում էր գիւղից դուրս վարելահողերին կից: Շինութիւնը պատկանում էր Թուլինանց հարուստ Թորոսին: Այս Թորոսի ծինելոյզից ծուխն ամբար-ամբար էր դուրս թափուում և խորովածի ախորժելի խնջմնջահոտը շուրջը տարածելով, կարծես թէ գիւղական բոլոր պնակալէզներին դէպի ինքը հրաւիրում, իսկ Զատոյի ծուխն ընդհակառակն, նուազում էր ու նուազում հետզհետէ:

Այս միջոցին Զատոյի անակնկալով հետաքըրքուող գիւղացիները, նրա տանից ներքեւ, կանգնեցրել էին եկեղեցուց տուն վերադարձող այն գիւղացուն, որ պատարագից առաջ Զատոյի հետ խօսակցելով «ժամ» էր գնացել և հարցնում էին.

—Խալբիա ջան, Խալբիա. օղորմի հօրդ, մի ասա տեսնենք Զատոյին էն ինչ գիւլլա դիպաւ, որ նհէ կրակուած ու կծրկոթած գնաց կօկալը (օդան) պրծաւ, ետոյ էլ, էսթաւուր սովի տարին, էփած կերակուրն ու հացը դուրս բերեց նհախ տեղից ու շների առաջը պրանեց...

—Եանի ասիլու մ, որ ասեմ:

—Հա, հա. միւննաթե ենք անում, որ աւես, թէ ով էր նհէ էրել խորովել էն խեղճ ու նաչար քեասիբին:

—Ասում էք ով:

—Հրաման քեզ:

—Մեր ջարդուած էրէցնին, ով:

—Էրէցնին. ոնց:

—Ո՞նց, նհէնց որ, խեղճ քեասիբին առաջուց խելքից հանել են, թէ անաջողութինդ խաչիցն ա, մինչև որ խաչին պատիւ չտաս, խչընանէքով ու խչընամբուրով ջրիցը չհանես, ծոռուած բաղդդ չի դղուիլ. նա էլ գնացել էր մէկն էրկոսով պարտք արել, փող վերցրել, արադ, բրինձ, զատ առել, ու, երկու մանէթ էլ

ըոնումը հուպ տուած եկել ժամ, որ Քրիստոսին քաւոր կաղնի, չեղաւ, էլի:

—Եանի մնց չեղաւ:

—Է՞հ. բանը գլխիցը պտես ասիլ որ բան դուրս դայ, է: Ժամից աղաք ես ու Զատօն խօսելով գնացինք ժամ. ես իմ տեղը կաղնեցի, նա խալխի միջով ճղոն-ճղոն անելով առաջ անցաւ, գնաց ջրօրհնէքի պղնձի առաջը կաղնեց ու խիմի աղատով սկսեց աղօթք անել, ծունդը դնել, երեսը տափերը քսել, ձեռները վերև բացրացնել, մի խօսքով՝ չտեսնուած հրեշտակ դառնալ, մինչև որ մեռօնը ջուրը թափելու ու խաչը ջրիցը հանելու վախտն եկաւ: Մեր խալխն էլ գլխի ընկնելով, որ խաչը Զատօն պտի հանի, սկսեցին լաղ անել—ծիծաղել: Մինն ասում էր՝ «ինչի իրան հալօքը չի կենում», մինը թէ՝ «ինչի իրան եօրդաննուգէօրա չի ոտը մեկնում», միւսը թէ. «ախը խաչքաւորութինն ինչ քեասիբի խարջ ա, ինչի իրա չափը չի ճնանչում, ինչի ա գնացել մեծամեծների տեղը կաղնելը». էսպէս հազար ու մի փլան ու բեհման:

—Վերջը, վերջը:

—Շատ խայտառակ բան:

—Ի՞նչպէս:

—Տէր հայրերը երկու կողմից էլ ուզում էին շահուել, ամա չեղաւ:

—Ո՞նց թէ երկու կողմից...



մէջ գառնիկներն ու ուղիկները մայում, մկր-  
կում էին իրանց մօր սիրով ու ցատկուում  
անվերջ. երբ մեղուները փաթաթուելով անու-  
շաբոյը ծաղիկներին, դեղին փոշին ոտիկներին  
թոշում էին դէպի փեթակ և կրկին վերագառ-  
նում ծաղկի, այդ նոյն ժամին բոլոր գեղջուկ-  
ներն էլ, ձմրան վերջում գետնի խորքերից  
թերժաժ եղած մըջիւնների պէս, աշխատանքի  
էին շտապում աջ ու ձախ:

Պապն ու ամին տրիպն ատամների արանքն  
առած, և կամ զօտիները խրած, ակն ջուր ըն-  
կած վազներին սուր հատիչներով վէրքեր հասց-  
նելով, և վէրքերից արցունքի նման կաթիլներ  
վազցնելով, այդիներում մատն էին հատում  
ու ցցած ձողիկներից տրիպով կապկապում.  
իսկ նրանց սիրասուն թոռնիկները շուրջները  
թոշկոտալէն ծալամ ժողովում։ Աշխատանքի  
հասած երիտասարդներն էլ զանազան գործիքնե-  
րով հանդերը քաշուած, ոմանք հօրիքները կը-  
ուունիների շարքերի պէս գութանների ու ա-  
րօրների առաջները ձգած, վարում, ցէլում ու  
ծրում էին կոման կոման, ոմանք վարածնե-  
րում ազուաներին ու այլ սերմնագող թոշուն-  
ներին քարեր նետելով, սերմ էին ձգում փեշ  
առ փեշ. ոմանք էլ՝ շաղի պէս քրտունքն երես-  
ներին պրպտալով ցաքուաններում, չափարների  
համար փշէ քաշաններ էին պատրաստում։ Վառ-

աշխատանքի այն ոսկի ժամերին սակայն, երբ  
գիւղի ճնճղուկներն ու հանդի ծտերն անդամ  
խոտն ու ծեղը կտուցներին ծւծւալէ բուն էին  
հիւսում, պարապ էին մնացել միայն տանուաէրն  
ու տէրտէրը, որոնք գիւղամիջում, խարխուլ եկե-  
ղեցու ստուերում, անհոգ, զով զով և անդարդ  
զրոյց էին անում ու անհամ անհամ ըըքում  
ու քոքում։

Այն միջոցին այն երկյարկանի տան և ըն-  
դածակ այդու ցանկապատից դուրս մշակների  
մի շարք էլ երևաց։ Հէնց առաջին հայեացքից  
նոյն իսկ անծանօթ մարդն էլ կը գուշակէր,  
որ այդին մի հարստի կամ հարստահարողի այ-  
դի է։ Տան և այդու տէր, երբեմն չարչի, եր-  
բեմն դուքանչի և վերջն էլ կապալառու թուլս-  
նանց թորոսը հարստութեան շնորհիւ քաղաք-  
ների և քաղաքացոց հետ շփուելով, իր գիւղա-  
կան կամ պապական տարազը եւրոպականի փո-  
կան խած, բայց բուի և անտաշ գիւղացիներից մինն  
խած, բայց բուի և անտաշ գիւղացիներից մինն  
կական ֆէսը թեքը գըած, տէրողորմէն ձեռին,  
խիստ փքուն ու հպարտ հպարտ անց ու դարձ  
էր անում մշակների առաջ և դաժան-դաժան  
էր անում մշակների առաջ և դաժան-դաժան  
աչքերով զըողի նման հսկելով նրանց, անհան-  
պիստ և անողորմ կերպով բանացնում էր նրանց.

այնպէս որ, դժուար թէ կարողանային նրանք  
քիթները սրբել.

Բանւորները բոլորն էլ այն աղքատ ու ան-  
ձար գեղջուկներն էին, որոնք ձեռքները պակա-  
ժամանակ թուլնանց թորոսի խանութից մի  
քանի արշին չիթ ու կտոր էին վերցրել ապա-  
ռիկ հաշուով և այսօր ոչ թէ այն ապառկի,  
այլ տոկոսի հաշումն էին բանում նրա համար։  
Մշակները շարուած էին բաղդը կապուած Զա-  
տոյի վարելահողում և այս հողի մէջ՝ աղայի-  
այգու երկարութեամբ փոսեր էին փորւում։  
Զատոյի հողն անիրաւացի կերպով պիտի  
զաւթէր թորոսը և իր այգին էլի ընդարձակէր։  
Զատօն մի ժամից աւելի անհամարձակ պտըտ-  
ւում էր նրա շուրջը և աղաչում։

— Աղա ջան, մեղք եմ, եզս հօ տարար-  
արի մրուաթ արա, հողս զաւթիլ մի, սրանով  
եմ երեխէքս պահելու...

Բայց աղան ոչ միայն չէր խղճում նրան  
ու չէր ամաչում, այլ ամենկին չէր էլ ուզում-  
երեաին նայել. թիկունքը շրջելով վրան, բամա-  
կով էր պատասխանում նրան և այն էլ՝ մոլեգ-  
նելով և նոր ու խայտառակ սպառնալիքներով  
զարհուրանքներով ահաբեկելով նրան։

— Կորիր, ըռադ եղիր գլխիցս. շան պէս  
քիչ մոժոայ, թէ չէ մշակներին կհրամայեմ, որ  
փոսերը հողիդ կիսովս անցկացնեն...

— Աղա, մեղք են մանուկներս, դու ու քո  
Աստօծը, ինձ մի զբկիլ մի կտոր հողից։

— Հըմ, հարամզադա սարսաղ. մեղք են,  
տար ջնուրն ածա. օհօ, հօ, հօ, թէոր քո մանուկ-  
ները մեծացան, աշխարն ափաթ են անելու, էլի...

— Աղա, թէ ուզում ես, ինձ ջուրը դցիր,  
երեխանցս պէտքա խնայես...

— Կորիր, լիրբ։

— Ասծու սէրն, աղա. միւննաթ եմ անում,  
որ բանս դիւանի չգցես...

— Ինչպէս, ինչպէս, ինչ ես հաշում. դի-  
ւանի. հան, հան հան. թէ Աստօծ կը սիրես,  
դիւանի անումը տալ մի, թէ չէ լեղիս թամամ  
կպատուուի ու կը մնամ անճար.

Կուշտ կուշտ ծիծաղելով ու բեղերը սղա-  
լելով հեգնում էր թորոս աղան և դառնալով  
մշակներին ասում. «Փորեցէք, անգած միք  
դնիլ, աւելի յետ փորեցէք. սրա հէրն անիծած.  
դնիլ ինայելու էի, երբ որ իրան ոնչինչ տե-  
ես էլի ինայելու էի, երբ որ իրան ոնչինչ տե-  
առն ինձ դիւանով ա վախեցնում, յետ փորե-  
ցն ինձ դիւանով ա վախեցնում, յետ փորե-  
ցէք. թող գնա տեսնեմ էն ո՞ր դիւանն ա սրա  
ցէք. թող գնա տեսնեմ էն ո՞ր դիւանն ա սրա  
ցէք. դիւանն մտիկ անելու», ապա Զատօյին դառնալով  
դնչին մտիկ անելու», ապա Զատօյին դառնալով  
և ձեռքով իր գըլանին խփելով, աւելացնում էր:  
և ձեռքով իր գըլանին խփելով, աւելացնում էր:

— էյ. դիւանն էս ա, այ, էս...

— Աղա, վերջին անգամ էլի եմ աղաչում,  
մի անիլ, օջաղս արին մի կապիլ. առաջինը ես  
քեզ միւննաթ եմ անում, ետոյ, թէկուզ է մեռ-

նեմ էլ, թողարկու չեմ, որ դու, քո բաղը մեծացնելու համար, իմ տափը զաւթես. էս էլ եզա չի, որ շահը շահի վրայ եկար ու խլեցիր և աչքներիցս պէծ ու կրակ թափելով բշեցիր, տառար. բաւական էր, հերիք էր...

—Հը, հը. ըռադ ըլիր, կորիր, թէ չէ էս փոսերից մինի մէջ վրագլխիդ սաղ սաղ թաղիլ կտամ,—ասում էր աղան ու աչքերն աջ և ձախ շուռ ու մուռ տալով, խէթմեթատում, իսկ Զատօն շարունակ կրկնում էր նոյնը թէ՝ «Թողարկու չեմ, որ քու բաղը մեծացնելու համար իմ տափը զողանգոռ խես ու իմ երեխէքը սոված թողաս»:

Այս հետզհետէ համարձակութիւն ստացող կրկնողութիւններին աղան այլկա չը համբերեց և մի ուժգին ապտակ զարկելով երեսին, դուրս քշեց նրան իւր սեփական հողից:

Զատօն ապտակն ստանալով, առաջին անգամ ուժերը ժողովեց, որ ինքն էլ խփի, պատասխանը տայ, բայց տատանուելով թողեց այդ համարձակութիւնը, կոտրուեց և յուսահատուած, ձեռնունայն ու փշրուած սրտով երեսը դարձրեց դէպի գիւղամէջ, դէպի Աստուծոյ դատարանի, արդարութեան տաճարի դուռը, որի պատերի սառն ստուերում ընկերակցար իրենց զրոյցներն ու հանաքները դուք

շարունակում էին պորտաբոյծ տգէտ տէրտէրն ու տանուտէրը:

—Ե՞... որ գնում եմ, դիւան կայ, —համ գնում էր համ ինքն իրեն բացականչում Զատօն:

Այս թունալից և լիովին յուսատութիւն ու լքնութիւն պարունակող խօսքերով բացականչելով Զատօն, յանկարծ կանգ առաւ կէս ճանապարհին և փոքր ինչ մտածելով, կարծես ուղում էր յետ դառնալ՝ կամ վրէժ առնել թուխինի տղից, և կամ մեռնել իր ոտնակոխ եղած, իր հարստահարուած սեփականութեան ու պատուի համար, նորից յուսախաբուելով, թէ մի գուցէ գոնէ այս անգամ խղճան իրեն, ու առանց արիւնհեղութեան պատճառ դառնալու իր արդար դատը պաշտպանեն, նորից, բայց աւելի արագ քայլերով շարունակեց ճանապարհ՝ շարունակ նոյն թունաւոր միտքը կրկնելով և հարց տալով ինքն իրեն թէ՝ «որ զնում եմ, ովասն կայ»:

Թուխինի տղի հեգնաբար և սպառնական խօսակցութիւնը, հայհոյանքները և ապտակահարութիւնն ու Զատոյի հեծեծանքը ճանապարհի շուրջը փուփած այգիներում աշխատող գիւղացիների ուշադրութիւնը վազուց էին դարձրել կատարուող անարդարութեան, անիրաւութեան և ոճրագործութեան վրայ, բայց միջոց չունէին օգնութեան հասնելու յուսահատութեան խորըն

ընկղմուած իրենց եղբօրը, որովհետև հարստութիւնը իր ոճագործ գիրկն էր ժողովել զիւղի արդարադատութեանը։ Փողն ու կաշառքը կուրացրել էր բոլոր դատաւորներին, իոկ խաւըրը, տգիտութիւնը պաշարել էր գիւղացիների ընկերական գիտակցութեանն ու պատուասիրութեանը։

Գիւղումը ոչ ուսումնարան կար, ոչ կըրթարան և ոչ գոնէ մի լուսաւոր հոգեորական, որ կատարելով և՛ իւր պարտականութիւնը և՛ համաձայն քրիստոնէական բուն ոգուն, աւետարանական ճշմարիտ քարոզութիւնովը յեղափոխէր իւր ժողովրդի միտքն ու հոգին և վրէժխնդրութեամբ լցնէր նրանց սիրտը դէպի անաստուած հարստահարիչները։ Եղած հովիւր վարձկան էր ու տղէտ, իսկ գիւղը մոռացուած՝ մոռացուած աշխարհի մի հեռու, մի խուլ անկիւնում։

Թւում էր թէ Զատոյի բաղդի խաղին, մարդկային անձեռնմխելի պատուի ոտնահարուելուն, ապտակահարուելուն և ծաղրուելուն հանդիսատես համագիւղացիների մէջ բարի ըգգացմունք, բնական կարեկցութեան նշոյներ կային դէպի անարգուողը, սակայն այն թոյլ կարեկցութեան խթանը, շարժիչ մեքենան, — գիտակցութիւնը, չկար բացակայ էր. ուստի տղիւտութեան բոլոր դառնութիւնը յաջորդաբար վա-

յելում էին՝ մի օր Զատօն, միւս օրը Մէջլումն ու Սահակը և շատ ուրիշները, և այսպէս միշտ և շարունակ, մինչև որ ուսման ու կըթութան շնորհիւ կբացուէր խեղճ գեղջուկների աչքը և կիարատուէր մշուշով պատած նրանց անմեղ մտքի խաւարը, ուր գիտակցութեան լոյսը գեռ մուտք չէր գործել։

— «Որ զնո՞մ եմ, ովան կայ»։

Այս սիրտ փշող յուսահատական դառն, աղի ու լեղի բողոքը քեասիք Զատօն մինչև տեղ հասնելը հաղար ու մի անգամ շշնջալով, զնում էր խիստ տխուր, խիստ մտահոգութեամբ, սիրտը կոծող տանջողութեամբ։ Գնում էր — յօնքերը տօթած, արագ ու վրդովուած, և, որ արտասուալին էր, ապտակի անարդ գրօշմը — թուախինի տղի հարուածի հետքերն երեսին, կապտացած ու արնաթաթախ էր գնում։

— Զատօ Զատօ, էհէ Զատօ...»

Այ տղայ, ինչի ես տհէ առնուած, շիոթուած հարաբեկաթ անում, ինչ ապատահել։

— Զատօ, Զատօ...

Այդիների չափարներից գլուխները դուրս հանած, հետաքրքրութեամբ և անհամարձակ կարեկցութեամբ, ետևից ձայն էին տալիս բանուորներն ու մշակները, բայց Զատոյին դիպած հարուածն այնքան ծանր ու դառն էր, որ կար-

ծես ականջները ծանրացել էին և նա ոչինչ չէր  
լսում ու տեսնում իւր շուրջը:

—Այ տղայ, Զատօ, էհէ Զատօ...

Դարձեալ ի զուր էին բարձրացնում նրանք  
իրենց ձայները, Զատօն իրեն սրտի ալաւովն ե-  
ղած, էլի համ քայլում էր, համ հազար ու մի  
երրորդ անգամ կրկնածը կրկնում:

«Որ գնում եմ, դիւան կայ»:

Նա հասաւ եկեղեցուն, գլխարկը վերցրեց և  
նախ համբուրեց եկեղեցու պատը, ապա մօտե-  
նալով տէր հօրը, արիւնու ու քրտնքու շրթունք-  
ներով համբուրելով նրա աջը, գլուխ տուեց տա-  
նուտէրին, դողդողալով կանգնեց նրանց առաջ  
և այրուելով ու մորմոքուելով արաւ իւր աղի-  
ողորմ գանգատը:

—Տէր հայր ջան, ախր սհէ անաստօծ, սհէ  
անխղճմատանք բան կլնի. Էս չի իմ հալը. ոտս  
գլուխս ու դօշս բաց, մի հալաւ էլա չունեմ, որ  
լաշս ծածկեմ. հու տեսնում ես, աչքիցդ հեռու  
չեմ, փառք Ասծու, ես ինչի տէր եմ, որ եղած-  
չեղածս միայն երկու օրավար հող ա, էն էլ մի  
կէսը թուխինի աչքածակ տղէն ա կտրում  
տանում: Բա ես ինչով պիտի ապրեմ, ինչով պտի  
տամ վզիս վրայ արժիմ դառած խարջ ու պարտ-  
քըս... մեղք չեմ:

Այսպէս, աղի արտասուքով հեղեղելով ա-  
րիւնոտուած ու այրուած այտերը, կրակելով ու

փշուր փշուր անելով իւր սիրտը, իւր տան-  
ջուած ու դառնացած հոգին, արաւ իւր բողոքը  
նախ՝ իւր հոգեոր հօրը, յուսալով որ նա կհո-  
վանաւորի իրեն՝ որպէս մի նետահար եղած ու.  
վշտահար և անօգնական գաւակի: Բայց ի զնւր,  
ոգէտ տէրը նոյնքան անզգայ մնաց, որքան  
տանուտէրը, իսկ երկուսը միասին, ինչպէս եկե-  
ղեցու պատի բարերը:

—Ինձ հւը ես գանգատւում, որդի, գիտը  
չես, որ ես դուխովնի եմ: Էդ գործը սրա գործն  
ա, գանգատդ սրան արա...

—Հալբաթ որ դրա գործն ա, միայն թէ  
քու խաթըն աւելի կընդունի, տէր հայր ջան...

—Չէ, հրդի, ես մարմնաւոր գործերին խառ-  
նում չեմ, էդ սրա գործն ա, սրան գանգատ-  
ւիր,—կրկնեց տէրտէրը, որին նա, Երիքովի ճա-  
նապարհին աւազակների ձեռքն ընկած վիրա-  
ւորուածի նման հայր գոչելով, այնքան յուսով  
սպասում էր, թէ մի կերպ կմխիթարի իրեն,  
մի կերպ կմեղմացնի իւր սրտի դառնութիւնը:

Բայց ի զուր, յուսախաբութիւն. ո՞ւր էր էն  
սուրբ աջը, որ բռնէր էն խաչը: Ընդհակառակն՝  
տէր հայրն իւր անտարբերութեամբն աւելի  
լքացրեց Զատոյին, քան թուխինի տղէն, իսկ  
տանուտէրը, տէր հօր այդ անբաժան սեղանըն-  
կերը, ոչ միայն ամենենին չգթաց նրան, այլև  
աննկարագրելի ու քարացած սրտով կարկտի

պէս քարեր շպրտեց խեղճ մարդու սրաին:  
—Քէօվլա ջան... Հողս... Հողս...  
—Չէնդ կարիր, ախմախ հարամզադա. մի  
թիզ հող ա, հօ մի օրավար չի:  
—Մի թիզ ա, զօրթ ես հրամայում, ամա  
իմ միակ յուսատեղն ա, աղաչում, խնդրում  
եմ, թողաս ոչ խլի, թողաս ոչ, որ ինձ անբաղ-  
դացնի...:

Կորի՞ր, ըռադ լի գլխիցս. քեզ պէս մի  
անպէտքը մարդու համար ես կարալ չեմ, որ  
գեղի պէտքական ու լաւ մարդկանցից մէկի քե-  
փին դիպչեմ: Մարդն արին-քըրտինք ա թափել,  
հարիներ ծախսել, հնդաստանից էլ ծառ ու-  
տինկ բերել, տնկել, որ ինչ ա քու մի թիզ հո-  
ղի խաթեր պտուղը չափարի դրսիցը խալխը թափ-  
տան, ուտեն:

—Քէօլսվա ջան, նրա ժառերի ճղները դրսի  
վրայ Աստօծ ա երկարացրել, իմ մեղքն ինչ ա,  
որ հողս խլի:

—Հողը թագաւորինն ա, քոնը չի: ում ու-  
ղենամ, նրան կտամ. իրաւունքն ինձ ա տուած:

—Վա, էդ ինչ ես հրամայում, ա ոտքիդ  
մատաղ. Թուխինի տղէն քիչ հող ունի, որ նրան  
տաս. հողն իմն ա, աղքատը ես եմ ախր, նա  
զուղան զօռ եկել, խլում ա:

—Աչքիդ պտուղն էլ ա հանում. իմ ես աղ-  
քատ, իմ ես անկեալ:

—Աղքատութինն ախր Աստօծ ա տուել,  
ես ինչ մեղաւոր եմ:  
—Մեղաւոր ես...

—Թող քու ասածն ըլի, քէօխվա ջան. գի-  
տամ, որ շատերին ես ողորմացել, քու Ասծնւ  
աչըլը, էս մի անգամն էլ ինձ ողորմա, ինձ պա-  
հիր. մերկ ու մեղք երեխանցս մըրուաթ արա,  
թողալ մի, նա հարուստ մարդ ա, զօռ շատ ու-  
նի, կարըմ չեմ աղաքին կաղնեմ, ուժս ախտըմ  
չի, ու հողս զօռդան զօռ զաւթում ա, տունս  
գլխիս քանդում ա:

—Ասեցի որ, քանի պատիւդ վրէդ ա, քա-  
շուիր գլխիցս, քիչ զահլաքիւշտ արա, թէ չէ,  
վեր կը կենամ, ու էս ձեռիս մաթըրախովը մէջ-  
քիդ կաշին մին, հինգ, խորխահան կանեմ:

—Քէօխվա, արեիդ մատաղ, քէօխվա. երե-  
խը մեղք ու կրակ են:

—Աղա, տօ քեօփօղի. քեզ հկ էր ասում,  
որ մի գլուխ հէնց երեխէքդ շատացնես...

—Քէօխվա, մըրուաթ արա...  
—Այ, այ, իմ մըրուաթն էս ա, այ...

Տեղից վել թոչելով, յարձակուեց անդթաբար  
և ակսեց շրպիալէ ու վրա-վրա մտրակահարել, իսկ  
նա՝ ահուած մարդ գաղանից, զեօրայից թևերով  
պաշտպանուող թուչունի նման, ձեռները մտրա-  
կին դէմ անելով յետ յետ գնած, քարովս ըն-  
կաւ ու մէջքի վրայ վայր ընկաւ, վերկացաւ նո-

ըից և, սաստիկ յուսահատութիւնից ինքնամոռացութեան մէջ ընկնելով, սկսեց արհամարհել նախկին աղաչանքներն ու պաղատանքները և ասաց վճռական կերպով.

—Տեսէք, ես էս ա գնում եմ հողիս վրայ արին թափեմ, էլ յոյս չկայ, համբերութինս ու աղաչանքս էլ հատաւ...

—Ի՞նչ, ի՞նչ. արին ես թափելո՞ւ. այ քեզ նոր արին, այ... այ...

Շրը՛խկ, շրը՛խկ, նորից մտրակահար անելով, ըրքրեց միսը բաց աղքատին և վոնդելով եկեղեցու բակից, դարձաւ տեղը, և պարծեցաւ.

—Շան տղայ. երկու շաբաթ ա ամեն կողմից թէ սուզեա, թէ քեօխվա, ասում են մի թիզ հող ա, ձեռը քաշեր, թող որ մարդի ծառերը չփշանան, սա եկել ա համարձակ-համարձակ հաշում կշտիս թէ՝ «արին կանեմ». ձեռիս շորվէն խմեցի՞ր. դէ հիմի դհէ շինքդ քորելով, որտեղ ուզում ես, զնա...

Այսպէս վերջացրեց իւր դրաման տանուաէրը, իսկ քահանան այդ սրտաճմիկ տեսարանին Զաքարիայի լուսութեամբ իւր հանդիսատես լինելը բաւական չհամարելով կարծես, դեռ գովեց էլ նրան, դեռ շոյեց էլ նրան.

—Շատ լաւ արիր, աչքն էլ հանեցիր. պէտքա իրան թայ ու թիւշը ճանանչի. քեօխվի ու սուզի խօսքն էլ որ չի լսում, էլ ումը պտի լսիլ:

Այսպէս վարուեցնան տէր հալրը իւր հարսանարուած զաւակի հետ:

ԺԲ.

«Բա որ ասըմ էի թէ դիւան չկայ. մի»... Մի անգամ էլ կրկնեց Զատօն այս աւերիչ ու գալշելի սղիւան» խօսքը և սրտոտ ու վըճռական քայլերով ուղղուեց դէպի իւր հողը, ուր այժմ Թուխինի տղէն տէրողորմիայի փոխարէն ծխախոտը ձեռին, ծխելով և բերանից հպարտութեամբ աջ ու ձախ ծուխ արձակելով, ծանրքայլուածքով շրջում էր չափարի երկայնութեամբ. բայց թւում էր թէ մի նոր և դիւական խորհրդաւորութիւն կար նրա այդ կասկածաւոր քայլուածքի մէջ, թւում էր, թէ նա հողի այդ կտորը խլելով չի բաւականանալու, այլ մի նոր աղէտ է բերելու Զորանանց Զատոյի ընտանիքի գլխին: Նա կարծես հոգիասի կերպարանք ստանալիս լինէր հետզհետէ, իսկ Զատօն գալիս էր համարձակ, հայնոյելով, Թուխինի տղի բռլոր գաղտնիքներն ու կեղաստութիւնները բարձրաձայն հրապարակ հանելով և մի դագանակ էլ ուսին դրած:

—Ես ուզում էի կարգին, դիւանով բան բռնեմ, երբոր դիւանն էլ միշտ անարդարութին ու անիրաւութին ա անում, երբոր միշտ



լինի, թէ տօ անիրաւ, դա ի՞նչ թամահ ա, որ  
էդ գառն տղքատի մեղքն ես ընկնում ու երե-  
խանց բերնի պատառը խլում. մեղք չի, տօ ան-  
օրէն թուրք, տօ անգութ ջնուդ:

—Մէղք. Քրիստոսին խաչ հանող ջնուդն  
ի՞նչ գիդայ, թէ խաչն ի՞նչ ա, նրա զօրութինն  
ի՞նչ: Դա որ մեղք իմանար, որ Աստւած ունե-  
նար, հինգ թիւմանի համար էն ծեր մարդուն  
գինու տեղ թէզէփ կը խմացնէր ու տանջելով  
կսպանէր:

—Օ՛, անխղճմտանք, Յուրդա ու արին խմող  
գաղան ա դա...

—Լաւ, տղերք, մենք էլ գիտենք, որ քեա-  
սիրի սեփական հողը Թուխինի տղէն ափաշկա-  
րա, օրը ցերեկով խլում ա, բա մեր հասարակու-  
թինն էլ պէտքա լոի ու բան չասի:

—Ի՞, խեղճ միամիտ. մենք եա հասարակու-  
թին եա հասկացող մարդ ունենք. ով պտի բան  
ասիլ, հասարակութեան զլխաւորնին էլ նրանք  
չեն, որ գիշերիս՝ աղքատի օջաղին ջուր ածելու  
համար Թուխինանց գինու կարասներումը. լող են  
տուել շոգած գոմշի պէս....

—Համա:

—Խեղճ Զատօ, երբ որ էդպէս էր, բա էլ  
ի՞նչի էր մաթրախի տակ ընկնում. շատագիլի  
ըուխիցը դառը խել կլնի, կորած ա խեղճը:

—Ծաղը միք անիլ որ, Զատօն գլխիցը ձեռը

վերցրած ա երերմ. նա սառած օձի պէս տա-  
քացել ա, կծիլու ա անպատճառ:

—Համբերութին ունենանք, տեսնենք թէ  
տաքանալն ու գէօրա մի բան շինելու, ա, թէ  
հիէ զուր տեղը խայտառակ ա դառնալու սաղ  
գեղի առաջ:

Այգիներից խիստ հետաքրքրութեամբ հե-  
տեւում էին որ տեսնեն, թէ Զատօն ինչպէս է  
կոռուելու իւր սեփական հողի վրայ. արդարն  
իւն թափելու է:

ԺԳ.

—Ես օսալ (վատ) դիւանի է...

Հայիոյում էր Զատօն և ասում. «Հէրիք չէ.՝  
մէկէլ տարին համբերեցի, գլուխս թակելով բա-  
ղատեղս խեցին, հերու էլ տագ արի, խոտհարքս  
տարան, հիմի էլ կանանց արտս կոխ տալով ու-  
զում են տափս կտրեն. էս անգամ էլ որ սուս  
կենամ, գալու են կնիկս էլ խլեն. ետոյ. էլ նա-  
մուս ա ֆնում ինձանում: Լաւն էն չի, որ եա  
մեռնեմ պլծնեմ, եա թէ չէ Սիրիք գնամ: Էլ  
ուրիշ ի՞նչ հնար ունեմ, չէ որ ջանիս հասել ա...

Այս անմեղ սպառնալիքներով Զատօն մօ-  
տենում էր յափշտակուող հողին:

—Մօտանում ա, —խորհրդաւոր ձայնով ի-  
րար մէջ շշնջում էին մշակները:

—Մօտենում էլ առ ու իսկի հանաք էլ չի անում, —զարմացմամբ նկատում էր մի ուրիշը:  
—Թող դայ, դուք սուս ձեր բանին կացէք. օձի գլուխը որ ցաւի, կըերի ճանապարի մէջ տեղը կդնի. հալբաթ դրանն էլ առ ցաւում, —վրէժինդրութեան թոյնով լցուած ասաց թորոսն ու դահճի աշքերով շուրջը թափուած կաղնի ցցերին նայեց, ապա ձեռքերը յետեր դնելով, լուութեամբ սկսեց քայլել: Բայց այս լուութիւնն աւելի վտանգաւոր էր թւում, քան թէ այն մեծ դադանակն ու աղմկաբար զայրոյթը:

—Արևս եմ երդւում, հօրս հոգին վկայ, որ եթէ իմանամ երկնքիցն էլ դիմիս աստղեր են թափուելու, որ իմանամ թէ թուինի տղէն ինձ կտոր կտոր էլ առնելու, էլի իրեսս եղ չեմ թերելու, էլի իմ հողիցը պոկ չեմ գալու: Հողն իմն ա, տանուտէրն էլ ա անիրաւ, պրիստաւն էր սուդն էլ, մեր էրէցն էլ, ու, հենց թէկուգ Աստօծ էլ, որ էսպէս անիրաւների դլխին քարեր չի գցում...

ինքնամոռացութեան մէջ, մի ժամից առաջ երկիւղածութեամբ եկեղեցու պատի քարերից համբուրող Զատօն Աստծուց էլ վիրաւուած, Աստծուն էլ յանցաւոր համարելով, որքան մօտենում էր իւր արիւնոտ հողում փուրուած փոսերին ու կոխ տուած կանաչած-

արտին և իրեն արհամարհող, բանի տեղ չդնող անիրաւին, այնքան աւելի էր դառնանում:

—Անիրաւ: անխղճմատանք, հէնց քնննն ես համարում, որ իմ հողումը հլա ձեռներդ էլ քամակիդ գրած ես մանգալիս:

—Որ ասում էի թէ հանաք չի. հրէս դագանակը վրա ա բերելու: Հասաւ, թամաշա արէք, —կըկնում էին հեռուից հետաքըքրուուղները:

Զատօն փոսերին համնելով, մշակների թիերից մինը խլելով, սկսեց փոսերը հողով լցնել և յանդիմանել նրանց:

—Տօ տնաւերու տնաքանդներ, բա գուք տեսնում չէք որ հողն իմ պապական հողն ա. Էս առնոտ տեղը դուք ոնց էք մշակութին անում: դէհ, հաջաթներդ հաւաքեցէք, թէ չէ ձեզ էլ նրան եմ խառնելու, —աղաղակում էր նա զայրագին և միւսների բահերիցն էլ քաշում, ձիգ-ձիգ անում:

Այս միջոցին թուխինի տղէն էլ չկարողացաւ դիմանալ:

—Մգեար դու էդ քանի՞ գլխանի ես, որ համարձակուում ես թորոսի փոսերը լցնել, տօքաչալ շան տղայ, —գոռաց նա և մի ահագին քարով գաղանաբար հարուածեց Զատոյի կողքին:

Հարուածը խիստ ծանր էր, Զատօն առաջին անգամ երերուեց, լքլքաց և քիչ, մնաց, որ վայրընկնէր, բայց աշխատեց արիսւթիւնը չկորցնել

դեռ, նա ոյժերը ժողովելով, թէկ դադանակը խիստ տեղին վրաբերեց, որ վերջացնի անիրաւին, սակայն վերջինս գլուխը փախցնելով ճարպիկութեամբ, հարուածի տակից դուրս պրծաւ դէպի մի կողմն և նորից քար առաւ, իսկ Զատոյի դադանակն իջնելով քարին, շրլիկաց ուժգին և կիսէն կոտրուելով, մի կտորը միայն մնաց նրա ձեռքին։ Զեռքին մնացած կտորը շպրտելով նա, և յափշտակելով բահերից մինը, նորից պտաւց հարուածելու։

— Վահ, վահ, թամամ չտեսնուած բան, տեղն ու տեղը կրակ ա դառել Զատօն, տղերք։ Զարմանքով նկատում էին հանդիսատեսները և ուշագրութեամբ հետևում նրան, որից ամենևին սպասելի չէր այնչափ համարձակութիւնը, որպէս մի ազքատ, նուազած, ստրկացած ու վերին պստիճանի հարստահարուած մահականացուից։ Արդարեւ, ով էր տեսել, որ մի Զատօ կամ մի Սահակ համարձակուէր հրապարակով և ամենի աչքի առաջ այնպիսի վիրաւորանք հասցնել թուխնաց թորոսին։ Ով էր տեսել, որ այս հարուստ և անմատչելի, ոչ միայն դիւղական տանուաէրի, այլև գտաւական բոլոր ոստիկանների և դատաւորների կողմից ապահովուած, նրանց հետ միշտ նստող, ուտող, խմող, խորհող ու խօսող, գիրք ստացած, գագանի պէս առողջ ու ահոելի, առիւծի պէս ու-

ժեղ ու յաղթանդամ մարդու դէմ յարձակում դորձէր մի Զատօ։ Բայց աղքատութեան ու չարչարանքի դառն բաժան բաժակն արդէն լցուել էր և հրէշն այլկա չէր սարսեցնում Զատօյին։ Նա քընած տեղում վիրաւորուած օձի նման տաքացել էր կարծես։ Զարքաշ կեանքի տանջանքները, անտանելի վիրաւորանքները, մարդկային պատուի այնչափ արհամարհուիլն ու ոտնտհարուիլը և բռնի ու բացարձակ զըկողութիւններն ամբարուած նրա տանջուած սրտում, այլևս համբերութեան տեղ չէին թողել, ամեն ինչ մոռացնել էին տուել նրան։ Մոռացել էր և՛ կեանք և՛ արև, և՛ մահ և՛ գարուն ու ծաղիկ, և՛, բաղցած ու պատառտուն-ցնցոտիներով հազիւ մերկութիւնները ծածկած կնոջն ու մանրիկ զաւակներին։ Վերջին համբերութիւնից դուրս եկած, նա գնում էր օրհասական կոիւ տալու իրենից անհամեմատ ուժեղի, մի կատաղի գազանի հետ։ Վերջինս մոծակի խայթոցից շփոթուած առիւծի նման մռնչում էր դէպի Զատօն, որ դեռ պտտում էր բահը, կրկնն արհամարհելով թէ մահաշունչ և ահաւոր հրեշտակի սպառնալիքը և՛ թէ մութն ու խոնաւ և սառն գերեզմանը։

Եւ, թէպէտ բահը շրլիկաց Թորոսի, գլխին, ցնցեց հանդիսատես գիւղականներին և, արիւնոտելով, քերծեց ու տարաւ ճակատի մի կողմն, սակայն բահը վերջին անդամ միայն հասաւ

իւր նպատակին, իսկ այնուհետև երկրորդ հարուածն ստանալով նրանից, իբրև վիրաւորուած գազանից, դողդողաց, չոքեց գետնին, ճիգ տրաւ կանգնելու, աշխատեց նորից ձեռքը ձգելու մի կողմը նետած բահը, սակայն ոտքերն այլևս չդիմացան տակին, իսկ գազանացած թշնամին գոնէ այդ դրութեան մէջ չխղճալով նրան; յափշտակելով փոսերը ձգած ցցերից մէկը, երրորդ և վերջին կատաղի հարուածն իջեցրեց նրա գագաթին, ջախջախեց գլուխը, վերջ դրեց այնքան տանջուած ու թունալից կեանքին:

Զատոյի սրբազան դին թաւալուեց գետին, միքանի ահաւոր ցնցումներ արաւ և երկու թէ երեք անգամ բերանը բաց ու խուփ անելով, աչքերը շրջելով, վերջապէս հանգստացաւ:

Հարան ընկաւ գիւղը:

—Վայ, սպանեց, սպանեց, մեռաւ, մեռաւ...

Այ ու ձախից իրար խառնուած գոչում էին ձայները: Շուառով, թէ այգետէրերը և թէ մերձակայ դաշտերի աշխատաւորները, մարդ, կին, ծեր, մանուկ, բոլորը ժողովուեցին և ամբոխը ժովացաւ Թորոսի պարտիզի առաջ, իսկ վերջնիս ընտանիքը և բարեկամները նրա կուռն ընկած, որպէս ծանր վիրաւորւածի, տարան իւր ամարաթը: Ամբոխը խօսում, ափսոսում, ախ ու վախ էր բաշում, զայրանում էր զազրելի եղեռնաւ գործութեան մասին, սակայն վրէժինդիր եղող

չկար. ոչ մէկի մտքից չէր անցնում հրդեհել և աւերել այն հոյակապ տունն ու ընդարձակ այգին, որոնք տասնեակ զոհերի և Զատօների արիւնով էին կառուցուած ու կանգնած:

Հարայի ձայները կայծակի արագութեամբ հասան նաև օդայի դրանը պարտատիրոջ համար մանած անսող խեղա նարգգի ականջին:

—Վայ, վայ, վայ... տունս քանդուեց, վայ...

Երկինք հասնող ու ապառաժներ շարժող ողբ ու ձայնով անբաղդ գեղղկուհին երկու բըռունցքով ծնկներին տալով, երեսն առնուած, մազերը պոկ տալով գլխիցը, որբացող մանկանցն օդայի դրանը թողած անտէր ձուտերի պէս, նետահար եղած թոչունի նման ծըւալէն ու ծըւդրտալէն գալիս էր գէպի արիւնոտ հողը, ուր պատուաւոր մահով ընկել էր իւր լծակից ընկերը, ուր վերջնականապէս փշուր փշուր էին արել նրանց բաղդի անիւը:

Թշուառը թոած հասաւ դիակին, գրկեց ու սեղմեց նրան իւր կրծքի միջին. ու, չդիմացաւ, տարուեց կսկծից, նուաղեց ու գնաց իրանից:

—Զուր, ջուր...

Բերին, սրբսկեցին թշուառի գունաթափ երեսին և մի կերպ մահից ազատեցին: Եւ նա, եղուկ կինը, ուժասպառ եղած և կարկտահարծաղի նման վաղաժամ թառամած, տրորւում կսկծում, գալարուում ու մորմոքուում էր անվերջ:

—Այ իմ անօրէնի ձեռն ընկած, այ իմ  
տանջուած, քաղցած ու ծարաւ տէր, բա ասում  
էիր թէ վախիլ մի՞ . բա ասում էիր թէ Աստօծ  
մեզ կտեսնի, մեր դարդին դարման կան՞ . այ  
իմ տէր, մի խօսա, մի ձէն տուր, մի ասա տես-  
նեմ ումն ես պահ տալիս էն եթիմ բալէքդ, էն  
չիփլախ քորփէքդ, որ լալիս են անհէր, անտէր,  
անհաց ու պարտքատէր: Վայ ինձ, վայ, Զատո-  
ջան. վայ իմ օրին ու արեին, վայ իմ կորած  
բաղդին, վայ իմ էրուած սրտին ու տչքերին, էս  
ինչ եմ տեսնում. դուզը վիխցդ, արինը քթա-  
ծակերիցդ գուրս են թափուել ու, երկնքի ցողի  
տեղ, արինով արտդ ներկել: Հնդ, ջնդ, սար,  
քնլ, երկինք, գիտենք, գեղ, գեղականք, ասեցէք,  
էս ինչ եմ տեսնում, կուրացնէմ աչքերս, խլա-  
ցնէմ ականջներս, թէ միշտ խորովուեմ էսպէս:

Սրտամորմոք, խղճահարող և այլող տոչո-  
րող այս ողբին յանկարծ միախառնուեց նաև  
հետզհետէ տեղ համսող մտերմների, հարևան  
այրիների, տատմէր պառաւի և մանաւանդ սրանց  
ձեռքով բերուած անմեղ մանուկների բարձրա-  
ցրած աղեկտուր և սրտակէզ ձիչն ու աղաղակ-  
ները, որոնք, էլ սիրտ չթողին, ապակու պէս  
տուին փշրեցին, էլ արցունք չթողին, անձրեի  
պէս ամենի աչքերից թափեցին և էլ ապառաժ  
չթողին, բոլորը ողբով հալեցին ու կ. գիւղը  
վայոց ձոր շինեցին:

Քարասիրա, անզգայ և անխիղճ մնացին  
միայն, հարային եկած՝ հարուստների շամփուր-  
ները լիզող և Զատոյի իսկական եղեռնագործ-  
ները, արեան հետ միշտ գործ ունեցող ոստի-  
կանները, դատաւորները, տանուտէրը և պա-  
հապանները: Այս բոլոր մահապարտները, այսին-  
քըն՝ անուսում, տգէտ ու անզիտակ ժողովրդի  
ջանն ուտող ցեցերը, վաղուց եկել և անարժան  
կերպով շրջապատել էին իրենց անարդարու-  
թեան և անիրաւութեան երեսից ընկած անմեղ  
զոհին ու, ձեականապէս, արտաքուստ, ամբո-  
խին խաբելով, իբր թէ իրողութիւնն ու ձմար-  
տութիւնն արձանագրում էին իւր տեղը, ուր  
հայ գեղջուկին անհասկանալի ոռւս լեզուով, յօ-  
դուտ թուխինի տղի, կեղծ ցուցմունքներ էր  
տալիս նրանց գերի դարձած և իւր հօր խաչը  
մոռացած գիւղական հայ տանուտէրը, և ուր  
քարացած հոգով, բայց մեռել ուտողի աչքերով  
հանդիսատես էր նաև մեր հայ տգէտ տէրտէրը:

Կաշառակեր ոստիկանների ձեռքով կազմած  
այս կեղծ ու պատիր պլոտոկով ոչինչ օգուտ  
չունեցաւ որբերի համար:

Թուխինի տղին, իբրև ծանր վիրաւորուածի,  
ինչպէս արձանագրուած էր պլոտոկոլում, առ-  
յամանակ ամենսկին տեղից չշարժեցին, իսկ Զա-  
տոյին շուտով գերեզման իջեցրին:


Թւում էր թէ գերեզմանում գոնէ Զատօն

հանգիստ կունենայ, բայց նրա ոսկորներին այնտեղ էլ հանգիստ չառւին. դատական քննչի ձեռքով մի քանի անգամ, անքուն որդերի պէս, նրա մարմինը շարժեցին տեղից, հանեցին զերեզմանից, կտրտեցին ու քերթեցին, և այդ ձևականութեամբ էլ իրենց գործը վերջայրին։ Դեղին ոսկու, կարմիր գինու և իւղու խորովածի երկրպագուները Թուլիսինի տղին ուղեցին, ու՝ արդարացրին, իսկ այրին ու որբերը մնացին քաղցած ու ծարաւ այրուելիս մինչև 1905 օրհնուած թիւը։

Մօտ 10 տարուց յետոյ, այս թուականին միայն արդար դատաստան տեսնուեց գիւղում, ուր, ինչպէս և ամեն տեղ, յեղափոխութեան շնորհիւ սարսափ տիրեց հարստահարիչներին ու կաշառակերներին, որոնք էլ չկարողացան հովանաւորել Թուլիսինի տղին։ և Աստծու մի երեկոյ կ. գիւղի ամբողջ շրջակայքը յանկարծ վառուեց ու լուսաւորուեց և մի քանի անգամ հրացանի ճայթիւններ լսուեցին նրա այգում։ Թուլիսին տղին սպանուած էր և կատաղի հրդեհը լափում էր նրա թէ այգին և թէ տունն ու տեղը, որով խորտակուեց և նրա բաղդի անիւը և այսպիսով միայն վերականգնուեց մեր ժամանակի արդարագատութիւնը։

Իսկ խղճուկ որբերը վերջապէս ստացան իրենց պապական հողը։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅ ՃՈՒՂՈՒՐԵԱՆ



## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՑԵՂ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐԻՆ

«ՊՇակն արժանի է վարձու»։

Մեր յարգելի գրագէտներից պ. Վրթանէս Փափազեան և հրապարակախօսներից պ. Մինաս Բերբերեանը հայ գրագիտութեան և գրագէտների առթիւ անցեալում գրած իրենց լրագրական յօդուածներում, ի միջի այլոց, նաև իմ հասցէին նկատողութիւն էին արել, որ ես, որպէս բելետրիստ, յետ եմ քաշուել գրական ասպարիցից ու լոել. իսկ ուրիշ գրագէտներ, ընկերներ, ծանօթներ ու ընթերցողներ, պատահած ժամանակ՝ գրականութեան մասին խօսք բացուելիս, միայն լոկ նկատողութեամբ չեն շատացել, այլև վիրաւորել են ինձ թէ՝ «քանի աշխարհական էիր, կարգին մարդ էիր գրական ասպարիզում, երբ քահանայ դարձար, յետ քաշուեցար ու մեռար»։

Բայց յարգելի գրագէտները, ընթերցողներս և քննադատներն իմ լոռութիւնը գուր էին բացարում փարաջայովս և կամ ծուլութեամբս. եթէ փարաջան լինէր հայ գրագէտի յետ քաշուելու ու լոելու բուն պատճառն, այն ժամանակ ես էլ իրաւունք կունենայի հարցնելու թէ՝ հապա ինչու մեր միւս գրագէտներից շատերն,

ինչպէս և ինքը պ. վ. Փափագեան նոյնպէս յետ են քաշուել և առաջուայ եռանդը չունին ու չեն գրում. նրանք էլ հօ քահանայ չեն: Ես կարծում եմ լաւ կլինէր, որ վերոյիշեալ քննադաներս ամենից առաջ բացատրէին նախ իրանց լուսութեան ու յետ նահանջելու պատճառը, որով բացատրուած կլինէր նաև իմը: «Մշակն արժանի է վարձու»:

Այս կարճ, կարուկ և ճիշտ որոշումն արուած է ամեն տեսակի աշխատաւորի համար, սակայն գրական հայ աշխատաւորը կարծես թէ բացառութիւն է կազմում նրանց մէջ, կարծես թէ նրան վիճակուած է միմիայն օղով կերակրուել, անապահով ապրել ու քաղցած էլ մեռնել:

«Չատոյի ըաղղի անիւը» եօթներորդ գիրքու է, որ հրատարակում եմ իմ սուղ միջոցներով, ուրիշ խօսքով ասած՝ ես մի յանցանք եմ գործում. այսինքն՝ ութ մանր երեխաներիս բերնի պատառը խում եմ տալու իմ այս ձրիակեր ընթերցողներին և կեղծ բարեկամներին, որոնք նախկին հրատարակութիւններս տարածելու մտքով ինձ խարենվ, ստացան, տարան կերան ու ինձ պարտերի մէջ ձգեցին և որոնց նամակներ զրելուց, այսօր ձանձրացել եմ ու լոել: Այո, ես վեց գրքերիս վրայ ծախսեցի 900 րուբլի և 400 րուբլի էլ չստացայ ծախսածիցս: Գիտեմ, որ մեր բոլոր հեղինակներն էլ ազատ չեն եղել այսպիսի օգուտներից ու վարձատրութիւնից և կամ շահագործողներից: Ուրեմն էլ ինչը ոգուրի հայ գրագէտին:

Թող ոչ ոք չկեղծի և չպարծենայ, թէ ինքը ծառայում է գաղափարին. սոված փորով գաղա-

փարին ծառայել չի լինիլ. ամենքն էլ մի պատառ հացի համար են շարժւում, եթէ աւելին չասեմ, որ իրար ձեռքից հացի պատառը մինչև անգամ խլում են...

Այսպէս, հայ գրագէտի ասպարիզից փախչելու բուն պատճառն է այն ընդհանուր և դառն վիճակը, որին, գարերից ի վեր, ենթարկուած է հայ գրագէտն ու գրագիտութիւնը: «Մշակն արժանի է վարձու». սա դեռ չի հասկացուել հայ գրագէտի համար. ինքը, հայ գրագէտն էլ չի հասկացել այս ճշմարտութիւնը, որովհետև նա յանցաւորի լուսութեամբ թոյլ է տալիս, որ ամենքը շահագործեն իրան:

Այս տեսակէտից հայ գրագէտին շահագործում են մեր ձրիապահանջ լրագրութիւնը, մեր դպրոցներն ու գրադարանները, որոնք գրագէտից պահանջում են, որ նա ամեն տեղ նուիրատու և աղղասէր լինի. հայ գրավաճառները, գրագէտի պատրաստի աշխատանքը գնում են իրենց գրատանը և այնտեղ պահելու համար 20—30 տոկոս վերցնում. չգիտեմ վերջիններս ինչո՞ւ չեն գնում կանխիկ դրամով և ինչո՞ւ իրանք գրագէտները համաձայնում են այդ շահագործող պայմանին:

Ասացէք ուրեմն, այսպիսի պայմաններում հայ գրագէտը կ'ոգեորուի, կզարդանայ, կը յառաջադիմի, թէ յետ յետ կզնայ: Փարաջանն է յանցաւորը, թէ ցաւն ընդհանուր է և բուժող չկայ:

Ամաչում եմ և չեմ ուզում նկարագրել և այստեղ յիշատակել այն վեհանուն հայ գրագէտներին, որոնք մեր ձրիապահանջ ընթերցող հա-

սարակութեան անտարբերութեան շնորհիւ, վա-  
ղահաս մահով մեռել են քաղցից և մեռնում են  
հետզհետէ, այլ ուզում եւ ցաւով նկատել այն  
թէ՝ քանի հայ հասարակութիւնն իւր գրադէտ-  
ների սառը դիակներով միայն կ'ոգերուի, քանի  
յօրելեաններին շարունակ օմէջը փուչ օխար  
տիկ» ուղերձներով և դատարկ ճառախօսութիւն-  
ներով կը գնահատի նրանց, քանի կշարունակուի  
գրական ձրիակերութիւնն ու շահագործութիւնը և  
հայ գրադէտն ինքն էլ այդ կ'ընդունի, դեռ շատ  
քանքարներ կթաղուին և հանձարներ կ'քարանան  
մեր մէջ և վերջապէս շատերն այդ ասպարէզը  
թողած՝ կամ քահանայութեան գիրքը կ'ընկնեն և  
կամ վաճառականութեան և այլն:

Միջոց պէտք է տալ հայ գրագէտին, որպէս  
զի նա մեռած տեղիցն էլ յարութիւն առնի:  
Բայց իրենց մասին ամենից շուտ և շատ  
պէտք է մտածէին հէնց իրենք գրագէտները, որ  
նոյնպէս խիստ անտարբեր են մնացել մինչև օրս:  
Հայ գրագէտներն այսուհետեւ թոյլ չպիտի  
տան շահագործուելու. իսկ սրա համար անհրա-  
ժեշտ է կազմել «հայ գրագէտների միութիւն»:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՅԱՆԱՅ ՃՈՒՂՈՒՐԵԱՆ

Իմ հեղինակով թիւններից լոյս են տեսել

Ռ. Կ.

1.	«Մոռացուած Աշխարհ»	Ա.	— 60	սպառուած է.
2.	.	Բ.	— 50	սակաւաթիւ.
3.	.	Գ.	— 40	սակաւաթիւ.
4.	«Աղա ո. Սարգիս»	.	— 15	սպառուած է.
5.	«Աղքատի Հալը»	.	— 25	սակաւաթիւ.
6.	«Գիւղի Այրին»	.	— 15	սակաւաթիւ.
7.	«Զատոյի բաղդի անիւը»	.	— 30	• • •

Կանխիկ վճարով հարիւրով գնողին 20 տոկոս զիջումն:

### ՇՈՒՏՈՎ, ԿՏՊԱԳՐՈՒԵՆ

8. «Շիրինանց Նախշունը»
9. «Անվէղար վարդապետը»

Հասցէս—Թիֆլիս, Միքայէլեան փ. Հ. 38.

գինն է 30 կոս.



NL0337997

ՀՀ Ազգային գրադարան

41192